

ԱՅՍ ԹԻՒՈՎ

Արամ Մանուկեանը Եւ Ապագայնացման Մունետիկները, էջ 7

Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» Ծաբաթօրեայ վարժարանի տարեվերջի հանդէս, էջ 8

Երեսուներեք աշակերտներ հրաժեշտ տուին Թորոնթոյի «Գոլդէան» միջնակարգին, էջ 9

ՀՕՄ-ի «Պապայեան» մանկապարտէզի ամալերջի հանդէս, էջ 9

Համակարգը կը խօսի..., էջ 10

Ո՛չ պրն. Աբրահամեան, հիմա՛ է «խորհրդանիշ դնելու» ժամանակը, էջ 12

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միսէ Անթիլիաս Փոխադրութիւնը, էջ 13

Վաստակաւոր մտաւորականը՝ Ծաբէ Տէր Մելքոնեան-Մինասեան, էջ 14

Թորոնթոյի ՀՕՄ-ի «Լափոյեան» երկրորդականի ամալերջի հանդէս



Կարդալ էջ 8

(Լուսանկարը Իշխան Ղազարեանի)

CAMAM

3401, Olivar-Asselin
 Montréal (Qc) H4J 1L5

397, Boul. des Prairies
 Laval (Qc) H7N 2W6

45 Hallcrown Place
 Willowdale ON M2J 4Y4

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Խոր կսկիծով կը գուժենք բազմավաստակ, վեթերան ընկերուհի՝ Շաբէ Մինասեանի մահուան գոյժը: Կորուստ մը՝ որ իր ետին կը թողու անփոխարինելի ներկայութեան մը անհետացման դառն իրողութիւնը:

Անկասկածօրէ՛ն, անոր ապրող ու շնչող - յարատեւօրէն ներշնչի՛չ - ներկայութիւնով մեր շարքերէն ներս - իր տասնամեակներու գրական, դաստիարակչական ու կազմակերպչական անդաստաններէ ներս արգասաբեր գործունէութեան վաստակին անմխտելի կշիռով - անմոռանալի արժէք էր ան:

Հարկ չկայ ըսելու, թէ իր պա՛րզ ներկայութեամբ իսկ, իր հոգեկան ու մտաւորական ամբողջական՝ էութեամբ, ընկերուհի Շաբէն կը շարունակէր ու պիտի շարունակէ մնալ անխո՛նջ հայուհիի եւ նուիրեալ Հ.Օ.Մ.-ուհիի անբասի՛ր տիպար:

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական վարչութիւնը, իր Կեդրոնական գրասենեակի լրիւ անձնակազմով, կու գայ իր խորագգած ցաւակցութիւնը յայտնելու ընկ՛հ. Շաբէ Մինասեանի սգակիր հարազատներուն, ընկերուհիներուն, ընկերներուն ու համայն վշտակիր պարագաներուն:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



2017
CR-V
 STARTING FROM
\$26,890*



Image for illustration purposes only.

HONDA
GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
 Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
 www.hondagabriel.com
 < OPEN SATURDAYS >

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian



HONDA

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



ARZ
fine foods

the essence of mediterranean gourmet

Authentic Food Experience

ARZ Fine Foods

**You Can Find ARZ Products
At Selected, Loblaws,
Superstore, Fortinos,
Wholesale Club, & Nofrills
Stores**

- Visit arzfinefoods.com for the latest promotions.
- You can also find us on Flipp
- For employment opportunities; Email your resume to humanresources@arzfinefoods.com

COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



**TRY HEARING AIDS
RISK-FREE**

Call 416 754-4327

699 Coxwell Avenue
Toronto, ON M4C 3C1
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#65 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327(HEAR)

www.hearingaidsource.ca



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



hearing aid source

invisible, custom & comfortable



416
292 5506

OPTICAL MART

Garo Kassabian, R.O.

- EYE EXAM ON PREMISES
- HUGE SELECTION OF QUALITY AND DESIGNER FRAMES
- SUNGLASSES & CONTACT LENSES
- BEST VALUE & SERVICE
- FAMILY BENEFITS & MOST VISION PLANS ACCEPTED


Լաւագոյն ակնոցներ յարմարագոյն գիներով
Վստահեցէ՛ք գոհ պիտի մնաք

Կը գնահատենք ձեր քաջալերանքը
We appreciate your patronage

Eye Exam Centre | Contact Lens Clinic
Optometrists Every Day | Designer Glasses



1415 KENNEDY RD. #14 TORONTO, ON M1P 2L6
TEL.: (416) 292-5506



ARMENIAN HERITAGE CRUISE®

JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!

• St.Kitts • Antigua • Puerto Rico • Labadee

You must book with TravelGroup in order to attend our private Armenian parties!



SIBIL

HAROUT PAMBOUKJIAN



AKH'TAMAR DANCE ENSEMBLE



INSIDE CABIN	\$1044
PROMENADE INSIDE	\$1094
OCEAN VIEW	\$1234
DELUXE BALCONY	\$1524
SUPERIOR BALCONY	\$1574
SUITES available upon request	

3rd or 4th adult or child over 11 years old sharing same cabin \$730
Children 11 years old and younger \$430

ALL RATES* are per person, double occupancy

*Government tax of \$108.36 per person is additional. Prices include all port charges and ACAA Registration fee. Deposit of \$250 per person due upon booking. Cruise is fully refundable until June 1, 2017. Rates and Information subject to change at any time without notice.



For Reservations Contact:
Local 561-447-0750 • Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102
125 SE Mizner Blvd., Suite 14, Boca Raton, FL 33432
AHC@travelgroupint.com
Call Arpi Ashkarian (Canada) (519) 748-2672

Լեզուի պահպանումը սփիւռքում. Ռա ապրելու, գոյատևելու կարգախօս է

Մարտի 29-ին, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրոմանեան» սրահում կազմակերպուել էր ճարտասանութեան մրցոյթ (առաջին անգամ հայերէն լեզուով) Ե. կարգից Լ. կարգ եւ Թ. կարգից ԺԱ. կարգ, նախաձեռնութեամբ Մհեր Գարագաշեանի, տնօրէնութեան եւ հայերէն լեզուի եւ գրականութեան ուսուցիչների համատեղ ուժերի համագործակցութեամբ: Եւ ահա, այդ օրը, ես մեծագոյն հաճոյքով ներկայ գտնուեցի գեղեցիկ այդ միջոցառմանը, որի նպատակն էր էլ աւելի կարեւորել հայեցի դաստիարակութիւնը:

Մրցոյթի ամբողջ ընթացքում, աշակերտների ելոյթները ներկայացնում էր դպրոցի սիրուած եւ յարգուած ուսուցիչ Մհեր Գարագաշեանը: Բոլոր մասնակիցներն էլ, մրցոյթին կարողացել էին նախապատրաստուել յաւուր պատշաճի, մեծագոյն սիրով, բազմաբնոյթ եւ հետաքրքիր թեմաներով: Այսպիսի ելոյթները, անկասկած, հարտացնում են աշակերտների բառապաշարը, մշակում տրամաբանօրէն խօսելուն ու ինքնավստահ լինելուն: Ամէն մի նմանատիպ միջոցառում հայրութեան համար, ինձ ուրախացնում է, որովհետեւ մի նոր թել է հիւսում դէպի մայրենի լեզուն:

Ճարտասանութիւն կամ ճարտարախօսութիւն նշանակում է պերճախօս, ճարտարախօս կամ ճոխ արտայայտուելու տեսակ՝ ճոխ բառապաշարով, որպէսզի խօսքը չլինի հասարակ, այլ բնական, պատկերաւոր:

Յիշենք մեր գրողներից Վահան Տէրեանին, Ակ. Բակունցին, Քուչակին եւ շատերին, բառերի ինչպիսի գեղեցիկ կազմութեամբ են նկարագրել բնութեան այս կամ այն հրաշք նկարագրութիւնը, այս կամ այն պատկերը. դրա համար էլ շատ հետաքրքիր եւ ճոխ է մեր մայրենի լեզուն, որպէս հնչիւնային համակարգ:

Բազմաբնոյթ էին ներկայացրուող նիւթերը, բոլորն էլ ինքնատիպ մեկնաբանութեամբ: Մասնակիցներից շատերը արժանացան ներկաների բուռն հաւանութեանն ու ծափահարութեանը: Շա-

տերն են արժանի եւ խրախուսանքի եւ գովասանքի: Հետաքրքիր եւ անբռնագրօս (համարձակ) կատարումներով աչքի ընկան Ն. Զոհրապեանը, Թ. Ճապրայեանը, Ք. Ղազարեանը եւ ուրիշները: Բոլորի ելոյթներն էլ հետաքրքիր էին, նրանք կարողացան դրսեւորել իրենց ունակութիւնների առաւելագոյնը:

Նմանատիպ ելոյթներում կարեւորում է բառի եւ խօսքի ընտրութիւնը, որպէսզի ասելիքը հնչի ճոխ, ապրումների եւ զգացումների զանգուած ստեղծուի:

Մնում է ցանկութիւն յայտնել, որ այսպիսի միջոցառումները լինեն շարունակական: Այդ օրը կարեւորագոյն օր էր, դպրոցը պարում էր մշակութային աքթիւ կեանքով: Շատ տպաւորուած եմ Ս. Թասլաբեանի ելոյթով, նա իր ելոյթը աւարտեց Ս. Կապուտիկեանի «Խօսք իմ որդուն» բանաստեղծութեան վերջին տողերով.

«Ու տե՛ս, որդի՛ս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
Թէ մօրդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանաս»:

Այս բանաստեղծութիւնը շարքային բանաստեղծութիւն չպէտք է համարել, այս բանաստեղծութիւնը սփիւռքը պահել է իր շուրթերին, որովհետեւ գտել է իր պարարտ հողը, քանի որ լեզուի պահպանումը սփիւռքում, դա ապրելու, գոյատևելու կարգախօս է:

Ժիւրիի անդամների կողմից ամփոփուեց լաւագոյն ելոյթների արդիւնքները, որոնցից վեց մասնակիցներ համարուեցին յաղթողներ: Ժիւրիի անդամներն էին Հայր Վարդան Թաշճեան՝ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան խորհուրդի վարիչ, պարոն Վիգէն Թիւֆէնքճեան՝ Համազգայինի Կեդրոնական վարչութեան անդամ, անգլերէնի ուսուցիչ եւ Անահիտ Չորպաճեան՝ գեղագէտ-մանկավարժ:

Ե. կարգէն Լ. կարգի արդիւնքներն էին.
Առաջին տեղ՝ Նարէ Զոհրապեան

Երկրորդ տեղ՝ Սեւակ Ղազարեան
Երրորդ տեղ՝ Քրիստիան Ղազարեան

Թ. կարգէն ԺԱ. կարգ՝
Առաջին տեղ՝ Գայիանէ Մարգարովա

Երկրորդ տեղ՝ Թալիա Ճապրայեան
Երրորդ տեղ՝ Արիանէ Թասլաբեան
Առաջին եւ երկրորդ տեղեր շահողները արժանացան դրամական պարգեւների, իսկ երրորդ տեղի մրցանակ շահողները՝ Համազգայինի գրագրարանից՝ նուէր-վկայագիր, հայերէն գիրք կամ խոսակաւառակ գնելու համար:

Կրկին շնորհաւորում եմ յաղթողներին եւ ի հարկէ բոլոր մասնակիցներին. բոլորն էլ լաւն էին, մնում է երբեք չկատարուել եւ էլ աւելի վստահ եւ համարձակ լինել: Յանկալի կը լինէր, որ օրինակելի ելոյթներն ու նիւթերը, տարբեր առիթներով նորից կրկնուէին եւ ինչու էլ, տպագրուեն թերթերում:

Թուս մեծ գրող Ի. Տուրգենեւի կարծիքով, երիտասարդութեան ամբողջ հմայքը, ոչ թէ ամէն ինչ անելու հնարաւորութեան մէջ է, այլ այն համոզմունքի մէջ, որ ամէն ինչ անպայման կ'անի:

Մրցոյթի առաջադրուող պայմաններից եւ ժիւրիի անդամների ընդհանուր գնահատականից ելնելով, ամփոփիչ խօսքով ելոյթ ունեցաւ Հայր Վարդան

Թաշճեանը:
- Մրցոյթը իր տեսակի մէջ անսպասելի եւ յուզիչ էր,- նշեց դպրոցի տնօրէնուհի տիկին Լեւա Գատեանը եւ կարեւորեց նման միջոցառումների կարեւորութիւնն ու յաջողութիւնը եւ իր շնորհաւորանքի խօսքը ուղղեց բոլոր մասնակիցներին:

Իսկ աքթիւ եւ շնորհալի ուսուցչուհի Ալիք Պուլկարեանի ներկայութիւնն ու սատարումը նկատելի է ամէնուր, այս անգամ, նաեւ այս միջոցառմանը:

Ժիւրիի եւ բոլորի ցանկութիւնն է, որ աշակերտների հետաքրքրութիւնը մրցոյթի հանդէպ աւելի կարեւորուի եւ մասնակիցների քանակի հետ լինի նաեւ որակական առաջընթաց, որի համար անհրաժեշտ է սիրել հայ լեզուն, ընթերցանութիւնը, գիրքն ու գրականութիւնը: Մենք մեծ անհանգստութիւն ունենք ազգի ուժացման (ձուլման) ու օտարամոլութեան ուղղութեամբ: Բոլորիս պարտքն է զգօն լինել եւ յիշել, որ միայն լեզուի միջոցով է, որ կարողացել ենք պահպանել մեր ազգային ինքնութիւնն ու ազգային պատկանելիութիւնը: Ինքնութեան դրոշմ մարդուն տալիս է լեզուն:

Գեղագէտ-մանկավարժ
Անահիտ Չորպաճեան



**Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677



Ghadir
Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com



Gary Chahinian

ABR., Broker of Record - Owner
RE/MAX DIAMOND Realty Inc.
W torontohomes.ca
E gary@remaxdiamond.com

416-258-8892



Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337



ANI
Resterante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbedian@hotmail.com
www.suttongroupadmiral.com



hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9



Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5
Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com



Part of the **Boji** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**



ANI BAKERY
ԱՆԻ ՓՈՒՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Արամ Մանուկեանը Եւ Ապագայնացման Մուճետիկները

Պատմութիւնը կ'ուսուցանէ եւ ներկան կ'ապացուցէ, որ կայսերապաշտական ու տիրակալական վարքագծերով առաջնորդուող ուժերը միշտ կ'ընդդիմանան այլ ժողովուրդներու ազգային արժէքներ յաւերժացնելու, ազգային համոզումներ դրսեւորելու եւ ազգային յիշողութիւն պահպանելու ճգնաժամներուն: Այսպէս եղած են հին կայսրութիւնները, այդպէս էր համայնավարական ծաւալապաշտութիւնը, այդպէս էր եւ կը շարունակէ ըլլալ Ամերիկեան դրամատիրական համաշխարհայնացումը:

Մեր ժողովուրդը քաջածանօթ է ապագայնացման մեթոդաբանութեան: Մենք տեսած ու ապրած ենք այդ փորձառութիւնը իր Օսմանական եւ Լենինեան գոնաւորումներով: Մենք նաեւ վկայած ենք մեր ազգային ծոցին մէջ իսկ անանող ապագայնացման մունեատիկները: Յաւալին այն է, որ մեր ազգային կեանքէն ներս տակաւին կը սնանին ու կը գործեն նման վնասակար տարրեր՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար:

Այս իմաստով, մեր հայրենիքի մէջ եօթանասուն տարիներու վրայ կուտակուած ազգային արժէքներ խորտակելու խտրող տակաւին կը շարունակէ իր գլուխը ցցել: Այս անգամ ո՛չ թէ յանուն համայնավարութեան, այլ՝ յանուն ազատականութեան, որ չափանիշի վերածուած է վերանկախացած հայրենիքի քաղաքական աւագանիի բազմաթիւ ներկայացուցիչներուն համար:

Ուստի, պատահականութեան կամ մտաւորական կարծիքի ազատ արտայայտման պէտք է վերագրել «Առաւօտ»ի խմբագիր Արամ Աբրահամեանի «Խորհրդանիշ դնելու ժամանակը չէ» վերտառութեամբ առաջնորդող գրութիւնը: Աբրահամեան կ'ընդդիմանայ երեւանի կեդրոնին Արամ Մանուկեանի արձանը տեղադրելու քաղաքապետութեան որոշումին: Ան իր ընդդիմութիւնը կը պաշտպանէ հակասական ու մանուշակապատ հիմնաւորումներով, որոնք ընտ-

րով ի մի հաւաքուած են պարզապէս նսեմացնելու համար մեր ազգային արժէքները:

Աբրահամեանի յօդուածին եւ առարկութիւններուն քննարկումը կատարելու կարիքը չկայ հոս: Այդ ուղղութեամբ գաղափարական ընկերներս Կարօ Արամեան եւ Վաչէ Բրուտեան առանձնաբար եւ ամբողջականօրէն կատարած են իրենց յօդուածներով, որոնք լոյս տեսան դաշնակցական մամուլի մէջ:

Սակայն, պէտք է անդրադառնալ եւ քննել Աբրահամեանի յօդուածի ճամբով փոխանցուող աւելի խորքային տեսակէտը, որ կը փորձէ նսեմացնել մեր ազգային արժէքներու իմաստն ու էութիւնը: Ճիշդ հո՛ս է որ դարձեալ իր գլուխը կը ցցէ մեր արժէքներու ապագայնացման խտրող: Աբրահամեան կրնայ յարգելի խմբագիր ըլլալ, սակայն կարելի չէ լուռ անցնիլ այն ախտին վրայէն, որ իր գրիչով կը փորձէ սփռել:

Ապագայնացման փորձի հետքերը ծածկելու համար, Աբրահամեան Արամի արձանը կը վերածէ պատմական դէմքի մը մէկ սոսկ անձնականացուած քարէ խորհրդանիշին: Իր տրամաբանութեամբ, Արամի արձանին տեղադրումը անհատի մը պաշտամունքի դրսեւորումն է, իր իսկ բառերով «մահականացուի» մը արձանն է: Դիտաւորեալ է այս մտացումը, որ պէտք է արձանը նկատուի անձի մը քարէ խորհրդանիշը՝ առանց այն ազգային արժէքներուն, որոնք բուն իսկ իմաստն են անոր կառուցման:

Արամը մեր ազգային եւ պետական արժէքները մարմնաւորող գերագոյն խորհրդանիշն է: Արամի անձին պաշտամունքը չէ որ կը կատարուի: Ծրագրուած կոթողը սոսկ քարէ արձան մը չէ: Անոր նիւթական բաղադրութեանէն անդին, յուշարձանը յուշարարը եւ թելադրիչն է Արամի մարմնաւորած երկաթեայ կամքին եւ ազգային պատգամին: Արամին մարմնաւորած ազգային պատգամն ու առաքելութիւնն է որ կը փոխանցուի, պէ՛տք է փոխանցուի մեր ժողովուրդին

եւ գալիք սերունդներուն:

Ծպտեալ ապագայնացման իր փորձին յաւելեալ հովահարման համար, Աբրահամեան անյարմար կը նկատէ նոյնիսկ իր պատկերացուցած «մահականացուի» մը արձանին տեղադրումը, որովհետեւ այդ մէկը կատարելու գծով «խօսքը կայացած պետութիւնների մասին է, որ տեղ հասարակական մակարդակով ձեւակերպուած է ազգային շահը»:


Ապագայնացման բարդոյթներ սրտիդ միտքեր են ասոնք: Անոնք ձեռնտու կրնան ըլլալ կայսերապաշտ (իմա՛ Ամերիկա) կամ ծաւալապաշտ (իմա՛ Ռուսաստան) ուժերուն, բայց ոչ մեր հայրենիքին ու ժողովուրդին:

Հայաստանի պետութիւնը, իր բոլոր սահմանափակումներով եւ մարտահրաւէրներով, կայացման ընթացքի մէջ է: Մեր հայրենիքն ու ժողովուրդը, ի հեճուկս բոլոր խոչընդոտներու, ունին ազգային շահի գիտակցութիւնը եւ այդ շահը ձեւակերպելու ընթացքի մէջ են:

Ապագայնացումով չէ որ մենք պիտի ամբարձնենք կայացնենք մեր պետութիւնը: Նման բարդոյթներու տարածումով չէ որ մենք պիտի կարենանք ձեւակերպել մեր ազգային շահը:

Պետութիւնը կը կայանայ ազգային արժէքներու եւ սկզբունքներու վրայ, ոչ թէ ապագային մտայնութեանց վրայ: Ազգային շահը կը ձեւակերպուի մեր պատմութեան գիտակցութեամբ եւ ազգային առաքելութեան հաւատքով, ուր ապագային բարդոյթները պարզապէս կը ծառայեն ջլատելու մեր հաւաքական շահն ու կամքը:

Եթէ պիտի ունենանք, եւ պի՛տի ունենանք, կայացած պետութիւն, ան պիտի




կերտուի Արամ Մանուկեաններու կեանքի օրինակով եւ ջամբած ազգային արժէքներով:

Եթէ պիտի ձեւակերպենք, եւ պի՛տի ձեւակերպենք, մեր ազգային շահը, այդ մէկը պիտի իրագործենք Արամներէն մեզի փոխանցուող ազգային պատգամով եւ առաքելութեամբ:

Արամի արձանը պիտի ըլլալ յուշարարը եւ արթուն պահակը մեր ազգային շահերուն եւ մեր պետութեան կայացման, ինչու չէ նաեւ մեր հայրենիքի ամբողջացման:

Մեր հայրենիքն ու ժողովուրդը պիտի շարունակեն մեր ազգային երթը Արամներու ճամբով: Եւ մեր ապագայնացման մունեատիկները քաջ գիտեն այս ճշմարտութիւնը:

ՍԵՂՕ ՊՈՅԱԾԵԱՆ


 Այցելեցեք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ կայքէջը՝ www.sourphagop.net

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron:
HD616 կամ SD16

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Շաբաթ - 08:30 (առաջին սիւնամ) եւ 1:30am
Կիրակի - 3:30pm
Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am
Երեքշաբթի - 12:00pm
Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm
Հինգշաբթի - 12:30pm, 12:30am
Ուրբաթ - 3pm
Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca

 Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յայտագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ նոյն յայտագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կէսօրուայ ժամը 12:00-1:00 **OMNI 1** կայանէն:

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ Ալին Դեքերճեան

Achat	Մտնուութիւն	Purchase
Hypothèque	Միջադէպ Կառուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կարուածք	Estate
Marriage	Սուրմուրթիւն	Marriage
Procurator	Փոխակորսագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

FOR RENT

Great 5 1/5 + basement and backyard available for rent in July or August in newly renovated duplex. Central area, close to all amenities, bus stop and restaurants in Chomedey, Laval. Available semi-furnished or unfurnished. Outdoor driveway parking available. \$1200 per month unfurnished.

Great 5 1/5 available for rent in August in second floor of newly renovated duplex. Central area, close to all amenities, bus stop and restaurants in Chomedey, Laval. \$900/month. Fridge stove and washer/dryer included. Outdoor driveway parking available.

Please call: 514-679-4279

Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանի տարեկերչի հանդես

Կիրակի, 18 Յունիս 2017-ին տեղի ունեցավ Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանին տարեկերչի հանդեսը, Հայ կեդրոնի «Լազարեան» սրահին ներս, ներկայութեամբ ծնողներու, բարեկամներու, ուսուցիչներու եւ աշակերտներու:

Հանդիսութիւնը սկսաւ Հայր Հրանդ Վարդապետ Թահանեանի միասնական Տէրունական աղօթքով, որմէ ետք մանուկները կատարեցին Հայաստանի եւ Գանատայի քայրերէն երգեցողութիւնը, ապա գրաւեցին իրենց տեղերը:

Չունարկին բացումը կատարեց Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» մասնաճիւղի ատենապետուհի ընկհ. Սօսի Թէրզեան, որ ծնողներուն ուղղած բարի գալուստի եւ շնորհաւորական խօսքերէն ետք նշեց, թէ ՀՕՄ-ի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանի գործունէութիւնը ուղղուած է մէկ նպատակի՝ նուիրուել Հայապահպանութեան կարեւորագոյն գործին, պատրաստել, դաստիարակել Հայ ոգիով մեծցող պատանիներ ու երիտասարդներ:

Յայտագիրը սկսաւ մանկապարտէզի աշակերտներէն կոչով, անոնք բեմ բարձրացան իրենց ուսուցչուհի տիկին Ռիթա Ճէպէճեանի առաջնորդութեամբ եւ խմբովին երգեցին «Ով եմ ես» եւ «Ձիւղեր» երգերը ապա կատարեցին անհատական ներկայացումներ: Անոնք իրենց երգերով եւ արտասանութիւններով հմայեցին բոլոր ներկաները: Յաջորդ բեմ բարձրացողները եղան Ա. կարգի աշակերտ-աշակերտուհիները, ուսուցչուհիներ տիկին Միլա Պեճուհի եւ

տիկին Ալին Մաճառեանի առաջնորդութեամբ, եւ ներկայացուցին «Իմ փոքրիկ նաւակ» երգը կենդանի պատկերով, ապա խումբ մը աշակերտներ ներկայացուցին «Երագ իմ երկիր հայրենի» երգը՝ ջութակով ընկերակցութեամբ Գառնի Բէջքէրեանի:

Հանդէս եկան Բ. կարգի աշակերտ-աշակերտուհիները, առաջնորդութեամբ տիկին Ալին Փամպուքեանի, ներկայացուցին «Բերքառատ կեռասներ» թատրոնը, գլխաւոր կատարողութեամբ Այա Չափանեանի, ապա միասնաբար երգեցին «Գարնանային իմ երագ» երգը:

Գ. կարգի աշակերտները հանդէս եկան, առաջնորդութեամբ տիկին Մանա Չոլաքեանի, ներկայացուցին Ապրիլեան թեմայով կարճ ներկայացում մը:

Անհատական կատարողութեամբ հանդէս եկաւ Լարա Թերզեան, որ ներկայացուց «Արի իմ սոխակ» երգը:

Ծնողներուն անունով իր սրտին խօսքը արտասանեց տիկին Թամար Հայթիան Արմէն, որ իր երախտագիտական խօսքը փոխանցեց դպրոցի անձնակազմին:

Դ. կարգի աշակերտները հանդէս եկան, առաջնորդութեամբ ուսուցչուհի Սուսան Սեղրակեանի, ներկայացուցին «Տարեշրջանի դասանիւթեր» ներկայացումը, ապա՝ «Ափ մը մոխիր» արտասանութիւնը եւ «Հնչեց զանգը» խմբային երգը:

Յայտագրի վերջին բաժինով հանդէս եկան Ե. կարգի աշակերտները՝ ներկայացուցին «Մարտի 18» երգը:

Յայտագրի ավարտին խօսք առաւ



վարժարանի տնօրէն տիար Վահէ Յակոբեան, որ իր խօսքին մէջ ըսաւ, թէ «Արագ» վարժարանը հնարաւորութիւն կու տայ ոչ միայն սորվելու հայոց լեզուն, այլեւ ճանաչելու պատմական, հոգեւոր ժառանգութիւնը, մօտ ըլլալու հայի ինքնութեան եւ սիրելու այն, ինչ աւանդ մնացած է մեր նախնիներէն: Դարերու ընթացքին դպրոցը գործած է եկեղեցոյ կողքին. թէեւ դասաւանդելու ոճն ու եղանակը փոխուած է, սակայն պատգամը մնացած է նոյնը՝ լուսաւորել մեր յաջորդ սերունդի միտքն ու հոգին: Նկատի առնելով մեր գաղութի վերջին շրջանի անցը, «Արագ» վարժարանի տարեկերչի հանդէսը «ոչ մէկ երեխայ ետ չձգել» նշանաբանով: Ապա ան իր երախտագիտական խօսքը փոխանցեց

աշակերտութեան, ծնողներուն, ուսուցչական կազմին եւ ի մասնաւորի Այտա եւ Կարին Տէր Յակոբեաններուն, որոնք հանդիսացան այս դպրոցի միտքն ու հոգին, որպէսզի «Արագ» վարժարանը մանկավարժական ձեւերով քայլ պահէ արդի ժամանակին հետ, նաեւ Համօ Ճուպուլեանին՝ դասարանները վերանորոգելու իր հսկայական աշխատանքին համար:

Հանդէսը վերջ գտաւ «Երեւան-էրէբունի» խմբային երգով:

Հանդիսութեան յաջորդեց սուրճի եւ անուշեղէնի սպասարկութիւն, պատրաստուած՝ ծնողներու կողմէ:

Մեղրիկ Սիլվանա Չափանեան

Թորոնթոյի ՀՕՄ-ի «Լափոյեան» երկրորդականի ամապերչի հանդես

ՀՕՄ-ի «Լափոյեան» երկրորդականի վարժարանի 13-րդ հունձքի ավարտական հանդէսը տեղի ունեցաւ Ուրբաթ, 16 Յունիս 2017-ին, երեկոյան ժամը 7:00-ին, Թորոնթոյի Հայ Երիտասարդական կեդրոնի «Համագրային» թատերասրահին մէջ:

Ներկայ էին Գանատայի Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տէր Բաբգէն Արք. Չարեան, Հոգեշնորհ Տէր Գեղարդ Ծայրագոյն Վարդապետ Քիւսպէքեան, Արժանապատիւ Տէր Կոմիտաս Աւագ Քահանայ Փանոսեան, Վարժարանի Կրթական մարմնի ատենապետ Սեւակ Քիւփէլեան, տնօրէնութիւն, ուսուցչական կազմ, ծնողներ, հարազատներ եւ բարերարներ:

Բացումը կատարուեցաւ 22 շրջանաւարտներու հանդիսաւոր մուտքով: Անոնք բեմ բարձրացան եւ Գանատայի ու Հայաստանի Հանրապետութեան քայրերէն ունկնդրութենէն ետք գրաւեցին իրենց տեղերը:

Հանդիսավարները հրաւիրեցին երեք աշակերտներ՝ ընթերցելու իրենց հրաժեշտի եւ երախտի խօսքը: Արագ Տէր Օհան՝ հայերէնով, Ռէմի Կրկէս՝ անգլերէնով եւ Դաւիթ Դաւիթեան՝ ֆրանսերէնով իրենց եւ դասընկերներու անունով շնորհակալութիւն յայտնեցին ծնողներուն, ուսուցիչներուն, տնօրէնութեան եւ բոլոր անոնց, որոնք օգնած են իրենց՝ հասնելու կեանքի այս կարեւոր հանգրուանին: Արագ իր ուղերձին մէջ գրած էր. «Կեանքի ընթացքին շատ դժուարութիւններ պիտի ունենանք, ըլլա՛յ համալսարանի մէջ, կամ գործի, բայց վստահ եմ, որ պիտի կարենանք դիմադրել, որովհետեւ այս դպրոցը հոյակապ ձեւով պատրաստած է մեզ»:

Ապա բեմ հրաւիրուեցաւ վարժարանի տնօրէն Դոկտ. Արմէն Մարտիրոսեան: Ան շնորհաւորեց շրջանաւարտները, անոնց ծնողները եւ բոլոր ներկաները եւ իր խօսքին մէջ շեշտեց ներկայ ժամանակաշրջանին բարձրագոյն ուսում ստանալու կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը:

Վարժարանի Կրթական մարմնին կողմէ խօսք առաւ պրն. Ալֆրէտ Պողոսեան: Ան ամփոփ ձեւով ներկայացուց 2016-2017 ուսումնական տարեշրջանին Կրթական մարմնին կատարած աշխատանքները եւ շնորհաւորեց ներկաները:

Տնօրէնին հրաւերով բեմ բարձրացան բոլոր ուսուցիչները, եւ տեղի ունեցաւ վկայականներու եւ մրցանակներու բաշխումը:

Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը / Visit our new website www.arsarmenianschool.ca

Ascenseur **Adams** Elevator Services Inc.
PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4
RBQ# 1812-6474-22
www.adamselevator.ca
TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613
RENOVATION, REPAIRS, MAINTENANCE, INSTALLATION OF ELEVATORS.
Eddie, Pedro, Joyce Oughourlian

Համակարգը կը խօսի...

Եւ վերջապէս կը խօսի օրուան համակարգը բացայայտելով իր իսկական մտայնութիւնը Արամ Մանուկեանի գործին եւ անով մարմնաւորուող մեր ազգային առաքելութեան վերաբերմամբ: Համակարգը կը մերժէ Արամ Մանուկեանի յուշարձանի տեղադրման գաղափարը: Յունիսի 28-ի իր էջերէն, «Առաւօտ» օրաթերթի Գլխաւոր խմբագիր՝ Պր. Արամ Աբրահամեան «Խորհրդանիշ Դնելու Ժամանակը Չէ» (Մ.Խ.- կարգաւ այս էջի ներքեւի սիւնակով) խորագրեալ իր յօդուածով կու գայ հնչեցնելու գործող համակարգին մեծ առարկութիւնը Երեւանի Քաղաքապետութեան կողմէ ծրագրուող այս պատմական նախաձեռնութեան դէմ: Փորձենք ամփոփել Պր. Աբրահամեանի գրութեան միտք բանին:

Պէտք չէ – ժամանակը չէ – կ'ըսէ ան, Լենինի երբեմնի արձանը փոխարինել որեւէ այլ «մահկանացու» ի արձանով: Ներառեալ՝ Արամ Մանուկեանի կամ Գարեգին Նժդեհի... եւ անոնց կարգին թուարկելով անունները Գրքոգ Գրգորեանի եւ Շառլ Ազնաւուրի եւ ինքնաբերաբար հաւասարեցնելով Արամն ու Նժդեհը մերօրեայ այս ազգայիններու բացարձակապէս անհամամատելի – թէկուզ մեծապէս յարգելի՝ – հանգամանքին: Բայց ինչու՞, հարց պիտի տայ ընթերցողը: Ինչու՞ կարելի էր ընդունել Լենինը եւ կարելի չէ ընդունել հայ անկախ պետականութեան հիմնադիր հայրը՝ Արամը: Քանի որ, ըստ Պր. Աբրահամեանի, Արամն ու Նժդեհը (եւ բնականաբար միւսները) չեն վայելեր համաժողովրդական համախոհութիւն: Լենինի արձանը կը վայելէր ամբողջական համախոհութիւն այդ ժամանակի պետական համակարգին կողմէ: «Երկրորդ հանրապետութիւնն ամբողջութեամբ եւ անվերապահ ընդունում էր այն գաղափարախօսութիւնը, որի կրողն էր «պրոլետարիատի առաջնորդը»: Իսկ այսօր... Այսօր, խմբագրի կարծիքով, այդքա՞ն ալ «իդէալական» չէ Արամ Մանուկեանի վիճակացոյցը, ինչպէս կը փորձեն հաւատացնել «Դաշնակցութեան ներկայացուցիչները»: «Առաջին հանրապետութեան ժամանակ չե՞ն եղել «աւազակապետական զբաւեւումներ», Արամ Մանուկեանը չի՞ ունեցել սխալներ եւ մոլորութիւններ»: Պէտք է գոյժ ըլլալ: Պէտք չէ ըլլալ փութկոտ եւ ստեղծել «նոր կուռք, նոր փայտապղուխ, որին մենք պէտք է երկրպագենք», կը յորդորէ երեւանեան մամուլի այս հրապարակախօսը:

Բնական է, որ հարց պիտի տաք այս կէտին վրայ, թէ ասիկա այն նոյն Արամն է, զոր մեր ժողովուրդը կը ճանչնայ ուղնուծուծով, թէ ուրիշ Արամ մը, որուն մասին դեռ սորվելիք ունինք ապաւինելով Արամ Աբրահամեանի բացայայտումներուն: Բայց համբերեցէ՛ք այս չէ բոլորը: Գոհարներու շարքը կ'երկարի: Խմբագրի կը թուի բռնուած ըլլալ իր իսկ լարած թակարդին մէջ եւ իր կացութիւնը «փրկելու» փորձ կ'ընէ պնդելով՝ «Իհարկէ պէտք չէ ապամոնտաժել որ»-ւէ եղած արձան... երեւի սարսափելով այն մտքէն, որ յանկարծ Մեծարգոյ Քաղաքապետը կրնայ լուրջի առնել իր առարկութիւնը եւ գործի անցնիլ «ապամոնտաժելու» իր տեսողութեան մէջ գտնուող երկու ականաւոր

Հանրապետութեան Հրապարակի սրտին վրայ Արամ Մանուկեանի յուշակոթողը կանգնելու արարքը մեր ժողովուրդի յստակ պարգաւն է յղուած բոլոր ապագայ սերունդներուն: Այդ արարքին մէջ կը բիրեղանայ մեր ազգային ուխտը հայրենի հողին տէր կանգնելու, անոր դարսին նուիրուելու, անկէ չհեռանալու, զայն ամէն օր իմաստաւորելու, զայն ամէն օր ազգովին իրացնելու

բոլջ»-իկներու՝ Ալեքսանդր Միանիկեանի եւ Ստեփան Շահումեան վիթխարի յուշարձանները: Կը պարզուի, որ կարելի է «երկրպագել» գոյութիւն ունեցող այս «կուռք»ներուն եւ «փայտապղուխ»ներուն (հեղինակին բառապաշարն է) անտեսելով անոնց թերութիւնները, բայց կարելի չէ արժանին մատուցել Արամին եւ Նժդեհին: Պէ՞տք է այստեղ ուղղենք սխալը «Ե յիշեցնենք, որ Արամն ու Նժդեհը բնաւ պէտք չունին «երկրպագու»ներու, քանի որ անոնք «կուռք»եր կամ «փայտապղուխ»ներ չեն եւ պիտի չըլլան:

Բայց Պր. Աբրահամեան կ'իյնայ յաջորդ անխուսափելի թակարդին մէջ: Պիտի հարցնէք, կ'ըսէ ան, թէ ինչու՞ մարդիկ կանգնած են ձորձ Ուաշինկթընի, Ուինսթըն Չըչիլի կամ Ջօր. Տը Կոլի արձանները: «Մի-թէ՞ նրանք կատարեալ էին, եւ նրանց գործողութիւնները՝ անվիճելի»: Եւ կ'աճապարէ բացատրելու, թէ անոնց պարագային մենք կը խօսինք «կայացած պետութիւններ»ու մասին, «որտեղ հասարակական մակարդակով ձեւակերպուած է ազգային շահը»... Պարզ խօսքով, ԱՄՆ-ի, Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ գոյութիւն ունի ընդհանրական ազգային ինքնադիտակցութիւն եւ մեր պետութեան մէջ՝ ո՛չ: Հոն կարելի է ճանչնալ ազգին ընդհանրական ինքնութիւնը խորհրդանշող մեծութիւնները, իսկ Հայաստանի մէջ՝ ո՛չ: Հոն մարդիկ գիտեն ինչպէս մարմնաւորել իրենց ազգային ձգտումները, իսկ Հայաստանի մէջ՝ ոչ: Եկէ՛ք ըսենք, որ առնուազն շքեցուցիչ է այս դառն եղրակացութիւնը. շքեցուցիչ եւ ճգնաժամային: Եւ անշուշտ այստեղ իսկ թաղուած է «չան գլուխը»:

Միայլ չհասկնա՛լ: Պր. Աբրահամեան նաեւ կ'ըսէ այսպիսի բաներ Արամ Մանուկեանի բարեմասնութիւններուն մասին: «Այդ գործիչն, իմ կարծիքով, իսկապէս արժանի է մեծագոյն յարգանքի եւ նոյնիսկ խոնարհման՝ հէնց նրա, ժամանակակից լեզուով ասած, ոչ կոն-վենցիոնալ, «կողմնորոշումային կարծրատիպերը» յաղթահարած վարքի շնորհիւ մենք ունենք պետութիւն պատմական Հայաստանի փոքր մասում»: Դժուարաւ կուլ գացող այս բառակապակցութիւնները այնուամենայնիւ կարծէք կը փորձեն զրուատել Արամի մեծ ներդրումը, բայց «նոր արձան դնելու գաղափարը» յաջորդ նախադասութեան մէջ իսկ կ'ենթարկուի վեթոյի եւ կը յայտարարուի «ժամանակավրէպ» յատկապէս, որ «այդ արձանը պատրաստուում են դնել պետականութիւնը խորհրդանշող կենտրոնական հրապարակում», կ'աւելցնէ ան:

Կ'ուզեմ անմիջապէս շեշտել, որ Արամ Աբրահամեանի այս յօդուածը դոյզն առընչութիւնն իսկ չունի

հայրենի մեր ժողովուրդի արժէքային համակարգին հետ: Ան կը ներկայացնէ քաղաքական կարծրատիպերու փէշերուն կառչած իշխանական համակարգը միայն, որ կը շարունակէ մերժել անկախ պետականութեան դժուարահաս ճորմերը: Աւելի՛ն: Այդ համակարգը կ'ուզէ անկախութեան քողին տակ մշտնջենաւորել արտաքին ուժերէն կախեալ եւ այդ ուժերէն «երաշխաւորուած» իր երջանիկ գոյութիւնը: Եւ ապրիլ այդ շինծու ու յաւիտենապէս կերպընկալ կեանքով: Այդպէս կարելի չէ, Պր. Աբրահամեան: Ինքզինք յարգող պետութիւնը պիտի գիտնայ ձեւաւորել իր ինքնիշխանութեան բանալիները: Պիտի գիտնայ իր գոյութեան առաջին իսկ օրէն յստակօրէն ճանչնալ իր ազգային շահը եւ զայն ընել սեւեռակէտ իր հաւաքական գոյութեան: Պիտի գիտնայ կողմնորոշուիլ ծանր փոխընդմեջութիւններու միջեւ: Պիտի գիտնայ ընդառաջ երթալ իր կեանքի մեծ մարտահրաւէրներուն: Ծիշտ այնպէս, ինչպէս Արամը: Ծիշտ այնպէս, ինչպէս Քառօրեայ Պատերազմի մեր մարտիկները ճակատի թէժ կրակներուն մէջ: Միայն՞ը կան գործուած: Այո, կա՛ն: Բայց թող այդ սխալներու քննարկումը ընէ իր առաւելագոյնը ազգին նուիրաբերած մարդը միայն եւ ոչ՝ այն քաղքենին (բուրժուա), որ մտաւորական փափկաճաշակութեամբ ազգին թանկագին ժամանակը կը վատնէ:

Ըսած եմ նախապէս եւ կը կրկնե՛մ: Հանրապետութեան Հրապարակի սրտին վրայ Արամ Մանուկեանի յուշակոթողը կանգնելու արարքը մեր ժողովուրդի յստակ պատգամն է յղուած բոլոր ապագայ սերունդներուն: Այդ արարքին մէջ կը բիրեղանայ մեր ազգային ուխտը հայրենի հողին տէր կանգնելու, անոր դարսին նուիրուելու, անկէ չհեռանալու, զայն ամէն օր իմաստաւորելու, զայն ամէն օր ազգովին իւրացնելու, զայն օտարի գերութեանէն ազատելու, զայն մաքրելու եւ զայն ամէն օր եւ ամէն ժամ ամուր եւ անասան հիմերու վրայ գեղեցկօրէն ճարտարապետելու: Արամը եւ իր նմանները ազգին բազմաշարժար պատմութեան մէջ «մահկանացու»ներ չեն: Անոնք մեզի համար մեր անմահութիւնը նուաճած եւ մեր հաւաքական գիտակցութեան մէջ արդարօրէն անմահացած նուիրեալներն են: Այդ կոթողը պիտի բարձրանայ, Պր. Աբրահամեան, եւ համայն ազգը պիտի խոնարհի Արամ Մանուկեանի մեծ վաստակին առջեւ: Յուսամ դուք ալ մեզի հետ: Եկէ՛ք կեցնենք այս անհեթեթ վէճը եւ մոռնանք, որ ան երբեւէ տեղի ունեցաւ:

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

Խորհրդանիշ դնելու ժամանակը չէ

Խորհրդանիշ դնելու ժամանակը չէ Առաջին հանրապետութեան 100-ամեակի առիթով Հանրապետութեան հրապարակում ուղում են դնել այդ հանրապետութիւնը կերտողներին մէկի՝ Արամ Մանուկեանի արձանը: Այդ գործիչն, իմ կարծիքով, իսկապես արժանի է մեծագոյն յարգանքի եւ նոյնիսկ խոնարհման՝ հէնց նրա, ժամանակակից լեզուով ասած, ոչ կոնվենցիոնալ, «կողմնորոշումային կարծրատիպերը» յաղթահարած վարքի շնորհիւ մենք ունենք պետութիւն պատմական Հայաստանի փոքր մասում: Բայց պատմական դէմքի նոր արձան դնելու գաղափարը, այնուամենայնիւ, ժամանակավրէպ է՝ յատկապէս, որ այդ արձանը պատրաստուում են դնել պետականութիւնը խորհրդանշող կեդրոնական հրապարակում: Այդ հրապարակում Լենինի արձանը դնելը նշանակում էր, որ երկրորդ հանրապետութիւնն ամբողջութեամբ եւ անվերապահ ընդունում է այն գաղափարախօսութիւնը, որի կրողն էր «պրոլետարիատի առաջնորդը»: Փոխարինել Լենինին որեւէ մէկ այլ իրական անձով, մահկանացուով լինի դա Արամ Մանուկեանը, Գարեգին Նժդեհը կամ թէկուզ Քըրք

Գրքորեանը, կամ Շարլ Ազնաւուրը, կը նշանակէր, որ մենք ունենք նոր կուռք, նոր փայտապղուխ, որին մենք պէտք է երկրպագենք:

Իհարկէ, պէտք չէ քանդել կամ ապամոնտաժել որեւէ եղած արձան: Բայց նորերի կառուցման հարցում անհրաժեշտ է շատ զգոյշ լինել: Առաջին հանրապետութեան ժամանակ չե՞ն եղել «աւազակապետական զբաւեւումներ», Արամ Մանուկեանը չի՞ ունեցել սխալներ եւ մոլորութիւններ: Ակնյայտ է, որ ամէն ինչ չի եղել այնպէս, ինչպէս 70 տարի ներկայացնում էր կոմունիստական քարոզչութիւնը, բայց չի էլ եղել նաեւ այնքան իդեալական, որքան հիմա փորձում են ներկայացնել Դաշնակցութեան ներկայացուցիչները: Նոյնն, ի դէպ, կարելի է ասել Երկրորդ եւ Երրորդ հանրապետութիւններին եւ դրանց առանցքային դէմքերի մասին: Չեն կարող վերապահուածներ չլինել որեւէ երկրի որեւէ քաղաքական կամ պետական գործչի, ընդհանրապէս՝ որեւէ մահկանացուի հանդէպ: Դուք կը հարցնէք՝ «բա ինչու՞ են դրել ձորձ Ուաշինկթընի, Ուինսթըն Չըրչիլի կամ զօրա-

վար Տը Կոլի արձանները: Մի՞թէ նրանք կատարեալ էին, եւ նրանց բոլոր գործողութիւնները՝ անվիճելի»: Խնդիրն այն է, որ այս դէպքում խօսքը կայացած պետութիւններին մասին է, որտեղ հասարակական մակարդակով ձեւակերպուած է ազգային շահը: Եւ յետոյ այնպէս չէ, որ, ասենք, Ուաշինկթընի արձանը հանել են (որովհետեւ պարզուեց, որ նա վատն էր) եւ տեղը դրել են, օրինակ, Ֆրանքլին Ռուզվելթի արձանը:

Մի խորհրդանիշը միւսով փոխարինելը՝ հենց դա է ոչ հասուն պետականութեան յատկանիշը: Դրա համար եմ ասում՝ պէտք չէ շտապել Հանրապետութեան հրապարակում որեւէ մահկանացուի արձան դնել: Թող մեր հասարակութեան մէջ արմատաւորուի պետական մտածելակերպը, այդ պարագայում միայն հասարակութիւնը կ'որոշի, թէ ինչպիսի խորհրդանիշ է իրեն պէտքը:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«Առաւօտ» թերթի խմբագիր



Ghadir

Ghadir

Meat & Restaurant

Մեր յարգյալ յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHA DIR մտափաճառատու են ու ճաշարանը փոխադրուած է առկի բնդարձակ և յարմարաւէտ կէտքոն ուր՝ նորագոյն եւ լաւագոյն ձևով ծառայելու մեր յաճախորդներու և:

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արևելեան գանձազան ճաշատեսակներ, օրինակ՝ մէնէիշ, պանիրով պեթրէկ, հաւու եւ կովու միսով շաուրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մաաշոթ, չի րօֆթ, լման հաւու խորոված, աւճուխ եւ այլ տեսակի աղանդերներ:

ՆՈՐ ՀԱՍՅԷ՝

1848 Lawrence Avenue East
Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶԱՅՆ՝

(416) 750-7404 կամ (416) 750-7400





Crown Pastries

Fine Middle Eastern Pastries

#1 Baklava in Toronto



OPEN DAILY

Monday to Sunday from 9 a.m. to 10 p.m.



BEINNAREN

ESH AL ASHFOUR

BAKLAVA

MAMMOUL

SWEET CHEESE

Specializing in pistachio, cashew, almond, walnut, and hazelnut baklava & other regional pastries and sweets. Everything is hand-made from scratch, using the finest ingredients and prepared fresh daily.



Call (647) 351-2015

2086 Lawrence Ave. East | Scarborough, ON

www.crownpastriesbaklava.com

Enjoy our sweets delivered free straight to your home in Scarborough, with a minimum order of \$50.

MR. SAKO Shoe Repair

SARKIS ADOURIAN

- Take-in & Widen Boots
- Excellence in all types of leather repairs
- Footwear Accessories
- Dyeing
- Key cutting
- Knife sharpening
- Luggage
- Orthopedic insoles



2768 Victoria Park Ave.

Bus: 416-491-2351

Cell: 416-826-4557

OPEN 7 DAYS A WEEK!
 WEEKDAYS: 8 am - 7 pm
 SATURDAY: 8 AM - 6 PM
 SUNDAY: 8 AM - 5 PM

WE SPECIALIZE IN LAHMAJOUN, FATAYER AND MANAKEESH!

WE ARE NOW MAKING SUJUKE LAHMAJOUN!

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



www.aniristorante.ca

*Fine Dining
Catering
Party Room
FOR UP TO 75 PEOPLE*



Jacques Varbedian

Digital

Professional Photography & Video

CALL us 416-722-9225





Ուրբաթ | Vendredi 11 août

Ouverture des portes à 19h Admission générale 45\$

Pour les réservations de table veuillez appeler:
 ELO OHANIAN 514-979-9350
 ROUPEN ASHKARIAN 514-887-6547

SANDRA & THE LATIN GROOVE

HAVANA NIGHT



**MARTIN
MKRTCHYAN**

The King Of Bling
MARCO
 Mr Tam Tam

Շաբաթ | Samedi 12 août

Ouverture des portes à 17h Admission générale 20\$



SAKO TASHJIAN



the highway.

Կիրակի | Dimanche 13 août

Ouverture des portes à 13h Admission générale 10\$

W/E DJ
Chris 24 #shk2017

L'ENSEMBLE "ANI" DE HAMAZKAYIN
 DE DANCE



JOËLLE

**4 à 12ans 10\$ par jour Arcades
 et Gonflables accès illimité**



Merci à tous nos commanditaires



VIP Rooms with web camera

Open 24/7



- Pick up & drop off
- Grooming

- Daycare
- Long-term



@beverlyhillsdoggiehotel

Experience Luxury with

THE ULTIMATE BEVERLY HILLS PACKAGE

What you get Monthly

- Unlimited Day Care Any Day of the Week
- One Overnight Stay
- One Spa Session (bath+mani+pedi)

«prince or Princess for the Month»

ONLY \$395!!

daycare for as low as \$13/day



Շուն ունեցողներու աչքերը լոյս

Լաւ լոյր շուն ունեցողներուն Շուներու յատուկ պատսպարան-պանդոկը արդէն իսկ բացուած է եւ կը գործէ: Մեզի յանձնելով ձեր շուները կրնաք հանգիստ մտքով արձակուրդի մեկնիլ կամ այցելութիւններու երթալ: Ձեր շուներուն հոգատարութիւնը կը ստանձնեն մասնագետներ, որոնք կը ինսամեն եւ կը կերակրեն ձեր շուները՝ ձեր փափաքին համաձայն:

Պատրաստ ենք ձեր շուներուն մազերը կտրելու, եղունգները ձեւաւորելու, լոզցնելու եւ այլն...:

Մանրամասնութիւններու համար դիմել՝



1396 Don Mills Rd. Unit 31 Toronto ON M3B 0A7
416.510.2434

www.beverlyhillsdoggiehotel.com

@beverlyhillsdoggiehotel

taste the difference



BEIRUTI

155 CONSUMERS ROAD, TORONTO, ON M2J 0A3
416 491-2227 | WWW.BEIRUTI.CA



Noor Fine Food

Gourmet Mediterranean Cuisine

Ձեր ճաշատեսակներու շայկական եւ Միջին Արեւելեան պահանջներուն համար դիմեցէք «Նոր Ֆայն ֆուդ» հաստատութեան, որ միշտ պատրաստ է, ձեր սպասարարները (Քլայթ.րինկ) ճիշտ ժամանակին հասցնել ձեր հասցէներուն:

Թորոնթոյի հասցէն,-

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

by Samadi Iraqi Group
www.instagram.com/noorfinefood



«Նոր Ֆայն ֆուդ» հաստատութիւնը մասնագիտացած է նաեւ տեսակաւոր խորովածներու (քլայպ) պատրաստութեան միջեւ իսկ բնան գառնուկ եփուած եւ անոր յարակից ուտելիքներով: Հշդներ որ գառնուկները ծնած եւ մեծցած են Օնթարիո մէջ: Հաստատութիւնը պատրաստ է նաեւ մկրտութիւններու, կշանտութներու, հարսելիքներու եւ այլ խրախճանքներու ու հոտարոյթներու ձեր նախասիրած ուտելիքներ մատակարարելու:



«Նոր Ֆայն ֆուդ» հաստատութիւնը մտա օրէն «BABYLON» ճաշարանը պիտի բանայ Հայաստանի մէջ:



ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Հայեցի կրթութիւն Ե. Ծնողք

Ծնողք...

Այո՛, ինչպէս ըսի նախորդիւ, մանուկի հայեցի կրթութեան, այլեւ ընդհանրապէս կրթութեան մարզին մէջ առաջնահերթ դերակատարներն են ուսուցիչն ու ծնողքը: Եթէ դպրոցական տարիքէն սկսեալ կրթուելու համար առաւելաբար ուսուցչին ազդեցութեան տակ պիտի գտնուի աշակերտը, մինչեւ այդ տարիքը հասնիլը, սակայն, ան բացառաբար ծնողքէն (ու շատ հաւանաբար մեծ ծնողներէն) պիտի ստանայ իր կրթութիւնը, ներառեալ՝ հայեցի կրթութիւնը:

Այս պատճառով ալ շատ կարեւոր է ծնողքի ազդեցութիւնը զաւակին վրայ՝ այս վերջինին ծնունդէն սկսեալ, նոյնիսկ մօր յղութեան շրջանէն, քանի որ կազմուող սաղմը անգամ արդէն հետզհետէ կը լսէ խօսուած լեզուն, ունկնդրուած երաժշտութիւնը եւ այլ ձայներ... Որքան հայեցի ըլլան այդ լեզուն եւ մշակոյթը, նորածինը այնքան հակամէտ պիտի ըլլայ հարազատօրէն զանոնք ընկալելու եւ իւրացնելու:

Ահա ճիշտ այստեղ ալ կը դրուին մի քանի հարցեր:

Առաջին, այսօրուան հայ ծնողը որքա՞ն կը տիրապետէ իր մայրենի լեզուին ու մշակոյթին: Դժբախտաբար անոնց իմացութիւնը, մանաւանդ հայերէնի իմացութիւնը բաւական ցած, եթէ ոչ շատ ցած մակարդակի վրայ կը գտնուի: Մենք ակնատես կ'ըլլանք նոր սերունդին մէջ, — բայց ոչ միայն նոր սերունդին, — մեր լեզուի աղաւաղման՝ ըլլա՛յ բառապաշարի տեսակէտէն, ըլլա՛յ շարահիւստութեան: Որքա՞ն օտար բառեր հետզհետէ աւելի մե՛ծ քանակութեամբ,

մեր առօրեայ խօսակցական լեզուէն դուրս կը մղեն հայերէն ամենէն պարզ բառերն անգամ, իսկ այդ բառերը քովքով կը դրուին շատ յաճախ աւելի մեր բնական երկրի շարահիւստութեան քան թէ մայրենիին համաձայն: Ի դէպ, այս մեղքը օր-ցերեկով կը դործուի նաեւ մեր մամուլին մէջ, թէ՛ հայրենիքէն դուրս եւ թէ՛, ափսո՛ս, հայրենիքէն ներս: Ասիկա հարցին տարբեր մէկ երեսն է, բայց անոր քննարկումը ներկայ յօդուածաշարքի սահմաններուն մէջ չի մտնիր: Այս կացութեան մէջ ինչքա՞ն կը դժուարանայ ուսուցչին դերը:

Երկրորդ, խառն ամուսնութիւնները ինչ դեր կը խաղան այս առումով: Անշուշտ չեն օգնիր հայերէնի ու հայերի ու մշակոյթի այլ բնագաւառներու տիրապետման գործընթացին, մանաւանդ եթէ տան մէջ խօսուած լեզուն հայերէնը չի հանդիսանար, թէկուզ աղճատուած ձեւով: Այո՛, դժբախտաբար, խառն ամուսնութիւններու պարագային, ընդհանրապէս հայերէնը երկրորդական, նոյնիսկ երրորդական տեղ կը գրաւէ, եթէ բոլորովին չքացած չըլլայ մէջտեղէն: Բացառութիւնները յարգելի են, մանաւանդ մեծ ծնողներու դերակատարութիւնը յաճախ փրկարար կ'ըլլայ այս տեսակէտէն: Տակաւին փոքրաթիւ իմաստուն ծնողներ կ'աշխատին, որ իրենց զաւակները սորվին թէ՛ իրենց երկուքին ալ մայրենի լեզուները, թէ՛ ալ երկրին լեզուն կամ լեզուները, սակայն այս ամենով հանդերձ հայեցիութեան նահանջը չի թաքցուիր:

Այս հարցը լուծում ունի՞ արդեօք: Նորընծայ ծնողներուն՝ թէ՛ հայերուն եւ

թէ՛ ոչ-հայերուն համար դասընթացքներ հաստատուին... Եւ արդեօք միայն լեզու, պատմութիւն ու մշակո՞յթ սորվեցնել, թէ ոչ նաեւ ծնողք ըլլալու հիմնական պայմանները...

Չէ՞ որ ներկայ ամուսնութիւններու կարճատեւ բնոյթն ալ չ'օգնիր, որ այդ ամուսնութիւններէն հասած զաւակները լաւ կրթութիւն ստանան, մանաւանդ հայեցի: Առանձին մնացած մայրեր կամ հայրեր ի դին ի՛նչ գոհողութիւններու զաւակ պիտի մեծցնեն ու տակաւին մտահոգուին ալ անոնց խօսած լեզուի մաքրութեան կամ ճշգրտութեան համար: Այս ալ կը ներկայացնէ երրորդ մեծ հարցը, որ կը խոչընդոտէ հայեցի դաստիարակութիւնը:

Չորրորդ հարցը, որ ի վերջոյ պիտի տրուի, ինչո՞ւ անպայման իրենց զաւակները հայկական վարժարան դրկել կ'ուզեն մարդիկ: Չէ՞ որ այդ վարժարանը առաքելութիւն մը ունի: Կը հաւատա՞ն այդ առաքելութեան: Անշուշտ շատ այլ առաւելութիւններ ալ ունի հայկական վարժարանը, բայց առաջին հերթին հայեցի դաստիարակութիւն ջամբելն է իր պարտականութիւնը: Կարելի՞ է ըսել, որ կ'ուզենք օգտուիլ այդ այլ առաւելութիւններէն (մաքուր ու ապահով ընկերային մթնոլորտ, ուսուցիչներու նուիրում, ուսումնական բարձր մակարդակ եւ այլն), բայց ոչ իր գլխաւոր առաւելութիւնէն, որ ապագայ հայերը պատրաստեն է: Առանց հաւատալու այս վերջինին, պարզապէս աւելորդ շքեղանք մըն է մնացեալէն օգտուելու ցանկութիւնը:

Ոմանց (շատերո՞ւ) մտքին մէջ կայ այն համոզումը, որ կը վճարենք, ուրեմն մեր ուզածը կրնանք պարտադրել: Հայերէ-

նը օգուտ մը չունի: «Հայերէն պիտի սորվեցնէք՝ սորվեցուցէ՛ք, եթէ կրնաք, բայց մենք չենք հետաքրքրուած հայերէն սորվեցնելու մեր զաւակներուն», — կը մտածեն անոնք: Արդարեւ, անոնք չեն ալ կրնար օգնել իրենց զաւակներուն՝ դասերը սերտելու համար, ուստի դժգոհ կը մնան, որ այդքան կարեւորութիւն կ'ընծայուի հայերէնին ու յարակից նիւթերուն: Առանց ատոնց՝ շատ երջանիկ պիտի ըլլային անոնք: Դժբախտաբար նման ծնողներ, այլապէս շատ յարգելի, կրնան մաս կազմել թէ՛ ծնողական մարմիններու: Եւ ի հարկէ իրենց մօտեցումներով ազդել դպրոցի կրթական ծրագրին, տնօրէնութեան թէ ուսուցիչներուն վրայ:

Տակաւին, եթէ ծնողները իրենց զաւակները հայկական վարժարան կը դրկեն, սակայն հեռու կը պահեն հայ ազգային կեանքէն՝ գրկելով զանոնք իրենց սորված հայերէնը գործածելու եւ զարգացնելու առիթներէ, շատ բան ըրած չենք ըլլար...

Ի՞նչ է լուծումը: Վերցնե՞լ հայերէնի դասաւանդումը. հրաժարի՞լ հայեցի կրթութիւնը դպրոցին նպատակը դաւանելէ, թէ՛ հայկական վարժարան ընդունիլ անոնց զաւակները միայն, որոնք կը հաւատան անոր առաքելութեան ու ամեն ջանք կ'ընեն, որ ան յաջողի զայն ի կատար ածելու:

Ահա պատասխանատու մարմիններու մեծ մարտահրաւէրը սակէ ետք:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
(Ծար. 5)

Linda KHARABOYAN, LL.B., D.D.N
Notaire et conseillère juridique

Testament
Mandat
Procuration
Financement
Immobilier
Attestations

Consultation personnalisée à domicile
Տնւնրու այցելութիւն ըստ փափաքի

1430, boulevard Saint-Martin O., Laval (Québec) H7S 1M9
T. 514.883.3498 F. 450.328.1258 E. linda@chezlenotaire.ca

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire

514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO
Cristal

(514) 744 4313

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL Montreal QC
H4L 3L3

photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CEL) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI
MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի
20 հայ թաքսի վարորդի Միքապէլ շրջանին մէջ:
Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317

RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence Immobilière

Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVREMENT SUR ONGLES
NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666

krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM™
Mortgage Programs Solutions Inc.
Licence # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

516.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Լոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Գեքերեճեան

Ո՛չ պրն. Աբրահամեան, հիմա՛ է «խորհրդանիշ դնելու» ժամանակը

«Առաւօտ»ի խմբագիր Արամ Աբրահամեան, իր «Խորհրդանիշ դնելու ժամանակը չէ» խորագրուած յօդուածով, կ'ընդդիմանայ Արամ Մանուկեանի արձանը Երեւանի կեդրոնը տեղադրելու որոշումին, պնդելով, որ հիմա չէ ժամանակը: Իսկ ե՞րբ է «այդ ժամանակը» ըստ իրեն: Բայց սկիզբէն սկսինք:

Յօդուածագիրը ինքզինք կը հակասէ իր առաջին իսկ պարբերութեամբ, երբ խօսելով արձանի տեղադրման որոշումին մասին կը հաստատէ, թէ Արամ Մանուկեանը «իմ կարծիքով, իսկապէս արժանի է մեծագոյն յարգանքի եւ նոյնիսկ խոնարհման՝ հենց նրա (...) վարքի շնորհիւ մենք ունենք պետութիւն պատմական Հայաստան փոքր մասում: Բայց պատմական դէմքի արձանը դնելու գաղափարը, այնուամենայնիւ, ժամանակավրէպ է՝ յատկապէս որ արձանը պատրաստուած են դնել պետականութիւնը խորհրդանշող կենտրոնական հրապարակում»:

Այսինքն, այո՛, Արամ Մանուկեանը արժանի է «մեծագոյն յարգանքի», բայց «ժամանակավրէպ է» անոր արձանը կանգնեցնելու գաղափարը:

Դուք բան մը հասկցա՞ք:

Ինչպէ՞ս կարելի է ընդունիլ Արամ Մանուկեանի մեծութիւնը եւ միաժամանակ... հակադրուիլ անոր արձանի տեղադրումի որոշումին: Տակաւին կայ միւս երեսը: Արամ Աբրահամեանը ընդվզեցնող գաղափարը նաեւ այն է, որ եթէ որոշուէր այդ արձանը կանգնեցնել Սարի թաղի, Աջափնեակի, կամ Նորքի «մասսիւներու» շէնքերէն մէկնումէկուն արանքը, տակաւին «հասկնալի է», բայց ելլել եւ կեդրոնական հրապարարակին մէջ գայն տեղադրել՝ անընդունելի է, ժամանակավրէպ է:

Հակասութիւնը կը կայանայ հոն, որ եթէ Արամ Աբրահամեան իսկապէս անկեղծ է Արամ Մանուկեանի իր բնութագրումին մէջ, այդ պարագային ինչո՞ւ «ժամանակավրէպ» կը համարէ անոր արձանը տեղադրելու գաղափարը: Ընդհակառակը, ի՞ր իսկ տրամաբանութեամբ, ինք պէտք է հաստատէր եւ ընդունէր, որ մենք ազգովին ուշացած ենք Արամ Մանուկեանը արժեւորելու գործին մէջ ու հիմա այդ «ուշացումը» սրբագրելու փորձ կը կատարուի Երեւանի քաղաքապետարանին կողմէ:

(Փակագիծ մը. այս յօդուածագիրին գաղափարական երէց ընկեր Կարօ Արմէնեան իր «Մեր անժամանցելի պարտաւորութիւնը» խորագրով յօդուածին մէջ [լրջ տեսած www.arfd.am կայքէջին մէջ, Յունիս 26ին], արդարօրէն դիտել կրն տար նաեւ, որ այս որոշումը ո՛չ թէ Երեւանի քաղաքապետարանի, այլ Հայաստանի խորհրդարանի համապատասխան բանաձեւի ու նախագահական հրամանագրի մակարդակով պէտք է կայացուէր: Արամով խորհրդանշուող եւ պետութիւն ստեղծած գաղափարական աշխարհը ա՛յդ մակարդակով որոշումի արժանի է):

Շարունակելով, «Առաւօտ»ի խմբագիրը կ'ըսէ, թէ «փոխարինել Լենինին որեւէ մէկ այլ իրական անձով, մահկանացուով՝ իրնի դա Արամ Մանուկեանը, Գարեգին Նժդեհը կամ թեկուզ Քրքր Քրքրեանը, կամ Շարլ Ազնաւուրը, կը նշանակէր, որ մենք ունենք նոր կուռք, նոր փայտաղուխ, որին մենք պետք է երկրպագենք»:

Դարձեալ դեղին քարտ «Առաւօտ»ի խմբագիրին: Ուրեմն ըստ իրեն, «փայտաղուխ», կամ «կո՞ւռք» է Միքայէլ Նայբանդեանի արձանը համանուն փողոցին վերի ծայրը: «Փայտաղուխ» կամ «կո՞ւռք» է Վահան Տէրեանի արձանը իր անունով կոչուած փողոցի պուրակին մէջ: «Փայտաղուխ» կամ «կո՞ւռք» է մեծանուն թամանդեանի արձանը, Կասկադի բացատին: Կամ վերջապէս, նոյն որակումներով բնութագրել Մատենադարանի մուտքին Ս. Սահակի ու Մեսրոպի, Խորենացիին ու միւսներուն արձանները, կամ մեր բազում այլ մեծութիւններու արձանները:

Լենինն ու իր արձանը մեր երկրին ու ժողովուրդին պարտադրուած էին դուրսէն: Իրմով խորհրդանշուող գաղափարական ու քաղաքական արժէքային համակարգը բռնատիրութեամբ պարտադրուած էր մեր երկրին: Մերը չէր ատիկա. գսպաշապիկը չի կրնար «մերը» ըլլալ: Մինչդեռ Ս. Մեսրոպն ու Խորենացին, Նայբանդեանն ու Թամանեանը, Տէրեանն ու Իսահակեանը, Արովեանն ու Թամանեանը մեր ժողովուրդին հարազատ զաւակներն են, որոնց ժառանգութիւնը դիմագիծ ու նկարագիր տուած է մեր պատմութեան, մեր ստեղծած մշակութիւն եւ քաղաքական մտածողութեան: Հետեւաբար, անոնք կուռքեր չեն, ոչ ալ անոնց արձանները քարի, կամ պրոնզի կտորներ:

Արամ Աբրահամեան կը շարունակէ. «Առաջին հանրապետութեան ժամանակ չե՞ն եղել «աւագակապետական դրսեւորումներ», Արամ Մանուկեանը չի՞ ու-



նեցել սխալներ եւ մոլորութիւններ: Ակնյայտ է, որ ամէն ինչ չի եղել այնպէս, ինչպէս 70 տարի ներկայացնում էր կոմունիստական քարոզչութիւնը, բայց չի էլ եղել նաեւ այնքան իտէլական, որքան հիմա փորձում են ներկայացնել Դաշնակցութեան ներկայացուցիչները: Նոյնն, ի դէպ, կարելի է ասել Երկրորդ եւ Երրորդ հանրապետութիւնների եւ դրանց առանցքային դէմքերի մասին»:

Այլ մոլորութիւն մը եւս: Ո՛չ պարոն Աբրահամեան, 1918 - 20 տարիներուն, «աւագակապետական դրսեւորումներ» չեն եղած: Եղած է սով, եղած է տասնեակ հազարաւոր գաղթականներու մահուան պատճառ դարձած համաճարակ, եղած է «անձեւ քառս», եղած են թեկուզ «աւագակային» դէպքեր: Բայց մանաւանդ, եղած է սովն ու համաճարակները յաղթահարելու պետական մտածողութիւն, եղած է այդ «անձեւ քառս»-ն պետական կառույցներ ստեղծելու կամք, եղած է նոյն այդ պետականութեան հիմքերը փորոզներուն նկատմամբ արդարացի հաշուեյարդար, եղած է ազգային ապահովութեան գաղափարը պետական մտածողութեան մակարդակի ու որակի բարձրացումը սերունդ: Այս բոլոր նշուածները եղած են ու ճիշդ այս նշուած փաստերուն առաջնորդած գաղափարական աշխարհի ներկայացուցիչներէն էր նոյն Արամ Մանուկեանը, որուն արձանը բարձրացնելու գաղափարը այսօր կը մերժուի Արամ Աբրահամեանի կողմէ՝ «կուռքերու չենք ուզեր երկրպագել» ու այլաբանական մակերեսայնութեամբ:

Իսկ անհեթեթութիւն է Արամ Մանուկեանին նկատմամբ յօդուածագիրին կատարած վերագրումը («սխալներ ու մոլորութիւններ») պարզ այն պատճառով, որ հարցը չի վերաբերիլ անձին (որ բնականաբար մարդ արարած է), այլ՝ այն գաղափարական սկզբունքներուն եւ քաղաքական կամքին, որուն ներկայացուցիչն էր նոյնինքն Արամ Մանուկեանը:

«Առաւօտ»ի խմբագիրը տակաւին կը շարունակէ ըսելով, որ միշտ ալ վերապահումներ եղած են ունէ քաղաքական դէմքի նկատմամբ եւ կը նշէ Ճորճ Ուաշինկթընի, Ջորջիլի կամ Շարլ Տը Կոլի անունները, որոնց շուրջ միշտ ալ վերապահումներ եղած են, սակայն ատիկա պատճառ չէ դարձած որ անոնց արձանները փոխարինուին ուրիշով. «Մի խորհրդանիշը միւսով փոխարինելը՝ հենց դա է ոչ հասուն պետականութեան յատկանիշը»:

Լաւ հետեւեցա՞ք. ուրեմն մէկ խորհրդանիշը (Լենինի արձանը) ուրիշով (Արամ Մանուկեանով) փոխարինելը «ոչ հասուն» պետականութեան յատկանիշ է: Ուրեմն, ըստ Արամ Աբրահամեանի տրամաբանութեան,

տահասութիւն է մեր ժողովուրդին պարտադրուած օտար ու բռնատիրական նկարագրով արժէքային համակարգ մը մեր ազգային արժէքներով փոխարինելու որոշումը (ամօթ է չէ՞, Ուաշինկթըն կամ Ջորջիլի ունեցող ազգերը, կամ Ենիշիւն ի՞նչ պիտի մտածեն մեր մասին, չէ՞): Հիմնովին սխալ մտեցում:

Ան կ'եզրակացնէ ըսելով, որ «պէտք է շտապել Հանրապետութեան հրապարակում որեւէ մահկանացուի արձան դնել: Թող մեր հասարակութեան մեջ արմատաւորուի պետական մտածելակերպը, այդ պարագայում միայն հասարակութիւնը կ'որոշի, թե ինչպիսի խորհրդանիշ է իրեն պէտքը»:

Ուրեմն, Արամ Մանուկեանի արձանը կանգնեցնելու որոշումը աւագարանքի արդիւնք է («պէտք է շտապել»), սպասենք, գիտելիք Յորի համբերութեամբ, որ մեր հանրութեան մէջ արմատանայ պետական մտածելակերպը, որ այդ հանրութիւնը ինք (ոչ թէ քաղաքապետարանը, ոչ թէ խորհրդարանը, ոչ թէ կառավարութիւնը) օր մը որոշում կայացնէ:

Կրկնութեան գնով ըսենք. Արամ Մանուկեանի արձանին, անոր կիսաքանդ տունը պատշաճօրէն վերականգնելու, Հայաստանի 1918ի կառավարութեան շէնքը իր իսկական իրաւատիրոջ՝ Հայ ժողովուրդին վերագարձնելու (բնականաբար առանց փիցայի այլանդակութեան) գաղափարները եւ առաջարկները կը միտին նոյն մեր հանրութեան հոգեկերտուածքին ու մտայնութեան մէջ արմատացնելու պետականութեան գաղափարը: Սերունդները իրենք գիտենք պիտի ճանչնան ո՛չ միայն Սարգսարապատով, այլ նաեւ նոյնինքն Սարգսարապատի ոգին ու կամքը հանդիսացող Արամ Մանուկեանի խորհրդանշած գաղափարական աշխարհով: Այդ սերունդները իրենց հայու ինքնութիւնը պիտի ճանչնան նաեւ Ա. Հանրապետութեան կառավարութեան շէնքով, հոն տեղադրուելիք՝ 1918 - 1920 տարիներու հանրապետութեան նուիրուած թանգարանով: Պետականութեան գաղափարը «հենց էդպէս», օղէն, ոչինչէն չի ստեղծուի: Ան կը ստեղծուի եւ կ'ամրապնդուի նաեւ տեսանելի խորհրդանիշներու լայն լուսաբանութեամբ, ատոնց մասին բացատրութեամբ: Ճիշդ այնպէս, երբ Մատենադարանի մուտքին կը տեսնենք Ս. Մեսրոպի եւ Խորենացիին արձանները, իսկ ներսը՝ անոնց մտքի արգասիքը հանդիսացող ձեռագիր մատենաները:

Այնպէս որ, պրն. Արամ Աբրահամեան, եկէք համաձայն եղէք այս յօդուածագիրն ու իր ընկերներուն, որ հիմա՛ է «խորհրդանիշ դնելու ժամանակը»:

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

«ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ» Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միւէ Անթիլիաս Փոխադրութիւնը



Ատանա, 1909-ի ջարդերէն ետք

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՂԷՏԸ

1

1908-ին, հայուն յեղափոխական ըլլալը այլեւս դաւաճանութիւն չէր համարուեր, եւ իբրեւ այդպիսին՝ չէր հետապնդուեր, ընդհակառակն ատրկա իբր «բացառիկ արժանիք» կը ճանչցուէր⁴⁷⁵, որ շատ կարճ պիտի տեւէր սակայն:

Մուշեղ եպս. Սերոբեան, որ Ատանայի Առաջնորդութիւնը ստանձնած էր 1904-ին, եւ Աղէտէն փրկուած էր, որովհետեւ դուրս կը գտնուէր Կիլիկիայէն, Ատանան հարուածելու համար չըջան ընող «չարամիտ գրպարտութիւններ»էն յիշած է հայ յեղափոխականներու գործունէութեան վրայ յերկրուածը, ըստ որուն՝ անոնց ճիգերով հայկական ապստամբութիւն մը կը պատրաստուէր:

Այս գրպարտութիւնները չըջան կ'ընէին 1907-ին, այնպիսի ժամանակ մը՝ «երբ Կիլիկիոյ մէջ հազիւ քանի մը հատ մատի վրայ համրուած յեղափոխականներ կային, առանց յեղափոխական կազմակերպութեան, եւ որոնք անգործութեան դատապարտուած ըլլալով՝ չէին կրնար որեւէ պատրուակ տալ հայութեան թշնամիներուն ձեռքը»⁴⁷⁶: Կիպրոսի մէջ գործող Օսմանեան գաղտնի սպասարկութիւնը դէպի Երւստղ ամէն օր քաշած հեռագիրներով կ'ուզէր հաւատացնել, թէ «ամէն օր գունդագունդ յեղափոխականներ կը վազեն դէպի Ատանա, մասնաւորապէս վարձուած նաւակներով»: Մինչդեռ, - բացատրած է իր պաշտօնին բերմամբ քաջածանօթ վկայաբերողը, - այդ փախուստի ճամբով Ատանա մտնողները ոչ թէ յեղափոխականներ, այլ հայրենակարօտ եւ որդեկարօտ գաւառացի հայեր էին, որոնց առջեւ երկրին դռները փակած էր Համիտեան բռնակալութիւնը, եւ որոնցմէ շատեր ձերբակալուելով՝ ետ կը դարձուէին»⁴⁷⁷:

Սահմանադրութեան հռչակումով, ի շարս այլոց՝ Ատանայի եւ շրջակայքին մէջ Հնչակեան եւ Դաշնակցական ակումբներ ալ հաստատուած էին, եւ անոնք «Օսմանեան Ընդհանուր Եղբայրակցութեան ծոցին մէջ» քաղաքական որեւէ «անպատեհութիւն» չէին ներշն-

չեր⁴⁷⁸, որովհետեւ դադրած էին յեղափոխական նպատակներ ունենալէ»⁴⁷⁹:

Զրպարտութիւնները վերստին հրապարակ կու գային: Անոնք անցեալ ունեցող դաւադրական ծրագրի մը ժահրերն էին:

Մուշեղ եպիսկոպոսի կարծիքով, այն ծրագիրը պատրաստուած էր Երւստղի մէջ եւ Զէյթունի 1895-ի ըմբոստութեան ժամանակ⁴⁸⁰: Իսկ թէ ինչպէ՞ս Ատանան այն ատեն ազատած էր իրեն վերապահուած Աղէտէն: Գուշակութիւնը. «պարզ վրիպում մըն էր, եւ կամ քաղաքական երկիւղի մը արդիւնքը, հաւանօրէն իր ծովամերձ դիրքին պատճառաւ»⁴⁸¹: Վրիպում մը ըլլալը անհասկանալի է, գուցէ քաղաքական վախի մը արդիւնքն էր, այսինքն՝ Եւրոպայէն վախին:

Օսմանեան կառավարութիւնը 1894-96-ին եւ անկէ վերջ շարունակուած կոտորածներուն իր արդարացումը շինած էր, ըսելով թէ՛ հայերուն մէջ յեղափոխական շարժում կար, թէ՛ անոնք հայկական թագաւորութիւն կ'ուզէին հիմնել. եւ իրենց շարժումներով եւ պահանջներով գրգռութիւն յառաջ կը բերէին իսլամ ամբոխին մէջ⁴⁸²:

«Չենք ուզեր խօսիլ եւ ցոյց տալ, - գրած է Մուշեղ եպիսկոպոս, - թէ որքա՛ն խախուտ, որքա՛ն անտեղի եւ որքա՛ն անարժէք էին այդ պատրուակները, քանի որ այսօր ընդունուած եւ ողջմտօրէն հաստատուած իրողութիւն մըն է, թէ այդ գործինակ շինձու պատրուակները ո՛չ մէկ իրաւունք կրնային տալ արդարասէր կառավարութեան մը — որպիսին ըլլալէ շատ հեռի էր Օսմանեան Կառավարութիւնը — անօրինակ վայրագութիւններով եւ հայաջինջ քաղաքականութեամբ սխիթմամբիք ջարդեր կազմակերպելու հարստահարուած եւ իրաւագուրի ժողովուրդներու ծոցին մէջ: Պէտք է խոստովանիլ սակայն, թէ Համիտեան նենգամիտ քլիքին եւ ժողովուրդեան մէջ գտնուող նենգաւոր խուժանամոլներուն համար, այդ յեղափոխական շարժումները, հարստահարուած ժողովուրդի մը իրաւաւարաւ պահանջներուն, յուսահատական բողոքներուն անընդմիջական եւ

անհրաժեշտ արդիւնքն ըլլալով հանդերձ, տակաւին իբրեւ պատրուակ գործածուեցան՝ այդ միեւնոյն քաղաքական եւ կրօնական մողեանդներու ձեռքին մէջ հայերը աւելի եւս ճնշելու եւ հալածելու»⁴⁸³:

Համաձայն իրեն, Սահմանադրական վարչակարգին գալէն յետոյ, հայերը եթէ յանցանք մը ունեցան յաջս յետագիմական թուրք տարրին, որ ահաւոր թիւ մը կը կազմէր, այն ալ՝ «Օսմանեան Սահմանադրական ընթացիկ իրենց անկեղծ եւ բոլորանուէր փարուամն էր»: Եւ եթէ յանցանք մը ունեցան իրենց անձին հանդէպ, այն ալ «Սահմանադրական ընթացիկ վրայ իրենց չափազանց վստահութիւնն էր. վստահութիւն մը՝ թէ Սահմանադրական ընթացիկն տակ այլեւս ջարդերն ու կողոպուտները անկարելիութիւններ էին»⁴⁸⁴:

1904-ին յաջողած չորս տարիներու ընթացքին, «քիչ ու շատ», ուղղակի եւ անուղղակի միջոցներով կրցած էր անտեղեկանալ՝ այն մտադրութիւններուն, որոնք կը տածուէին շարունակ Ատանայի եւ շրջակայքին նկատմամբ»⁴⁸⁵:

1907-ին, «Կիլիկիոյ սրտին»՝ Ատանայի տրուելիք մահացու հարուածը «ամբողջ ահաւորութեամբ պիտի գործադրուէր», եթէ տեղւոյն «Երկրասէր եւ հայասէր» կուսակալը՝ Պահրի փաշա «թեթեւ տկարացում մը ցոյց տար»⁴⁸⁶: Երւստղ պիտի ուղղէր սա հեռագիրը. «Ատանայի հայերուն վերագրուածները գրպարտութիւններ են միայն. անոնց հաւատարմութեան մասին բացարձակ վստահութիւն ունիմ. եւ արդէն այդ հաւատարմութիւնը երաշխաւորուած է Սիսի Կաթողիկոսին եւ Ատանայի Հայոց Առաջնորդին կողմէն: Եթէ հակառակ այդ երաշխաւորութեան, Բարձրագոյն Կամաց հակառակ դէպք մը պատահի նահանգիս մէջ, նախ Կաթողիկոսն ու Առաջնորդը պիտի սպաննեմ ու յետոյ անձնասպան պիտի ըլլամ»⁴⁸⁷:

«Անխառն ուրախութիւն»ը Սահմանադրութեան վերահաստատման՝ հազիւ մէկ ու կէս ամիս տեւած էր, եւ «խուլ կերպով» ծայր տուած էր մէկ կողմէն հակասահմանադրական շարժումը եւ

միւս կողմէն հայերու հանդէպ ջարդի սպառնալիքը»⁴⁸⁸:

Արդէն Ատանայի եւ շրջակայքին մէջ, թուրքերն ու անոնց ցեղակիցներն ու գինակիցները միշտ ատելութեամբ եւ չարամտութեամբ կը նայէին հայութեան՝ «առաջնորդուած քաղաքներու եւ գիւղերու թուրք մեծամեծներէն, եւ իրենց ընչաքաղցուցութեան»⁴⁸⁹: Թուրք մեծամեծները, որոնց շահերը վտանգուած էին յանկարծական փոփոխութիւններէն, մուսթիմ մէջ համախմբուած եւ իրենց հաւատարմները գինած էին: Մինչ Ատանայի եւ շրջակայքին մէջ ոչ մէկ հայ գինավաճառ գոյուլթիւն ունէր՝ թուրք գինավաճառները շարունակ եւ մեծաքանակ գէնք կը փոխադրէին եւ կը վաճառէին»⁴⁹⁰:

Եւ ահա Ատանայի հայութիւնը, որ «ի բնէ անվարժ (էր) գէնքի եւ ինքնապաշտպանութեան ոգորումի կեանքին», սպառնալիքին տարածուելուն հետ՝ կը սկսէր գէնք գնել, քանի իրեն համար յստակ կը դառնար, թէ «Սահմանադրութիւնը փրկել» (նախ) իր անձը փրկել կը նշանակէր»⁴⁹¹:

ԳԱՌՆԻԿ ԱՆ. Ք. Գ.

- ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
- 475.- ՌՅՅ, է 85:
 - 476.- Մուշեղ եպիսկոպոս, «Ատանայի Զարդը/Եւ/Պատասխանատուները», Բ. տպ, Պոսթոն, 1910, է 9: Յետ այսու՝ ՄԱՊ:
 - 477.- Ն, է 10:
 - 478.- Ն, է 18:
 - 479.- Ն, է 19:
 - 480.- Ն, է 7:
 - 481.- Աճդ:
 - 482.- Ն, է է 3-4:
 - 483.- Ն, է 4:
 - 484.- Ն, է 5:
 - 485.- Ն, է 7:
 - 486.- Ն, է 8:
 - 487.- Ն, է 12:
 - 488.- Ն, է 19:
 - 489.- Ն, է 13:
 - 490.- Ն, է է 19-20:
 - 491.- Ն, է 20:

ՏԵՐԵԻԱԹԱՓ

Վաստակաւոր մտաւորականը՝ Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեան

Ստորեւ ներկայացուած դամբանակարգը արտասանուած է Յուլիս 4-ին, Վիգէն Թիւֆէնգեանի կողմէ:

Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեանի սգակիր հարազատներ եւ բարեկամներ,

Քիչ ետք վերջնական հրածնա պիտի տանք անձնաւորութեան մը, որ կարկառուն դէմք մըն էր ո՛չ միայն Գանատայի հայկական դաղութներու կեանքին մէջ, այլեւ միջազգային առումով: Ստուգիւ, Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեանի ասպարէզն ու նուաճումները կը տարածուին բազմաթիւ երկիրներու վրայ, սկսելով Լիբանանէն, անցնելով Եւրոպա ու անկէ ալ Հիւսիսային Ամերիկա:

Դոկտ. Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեան ծնած է հանրածանօթ ազգայիններ Մելքոն եւ Լիւսի Տէր Մելքոնեաններու ընտանիքին մէջ, Պէյրութ, Լիբանան: Տան մթնոլորտն ու ծնողքի ջամբած դաստիարակութիւնը, որոնք կազմաւորած են ապագայ մտաւորականն ու անխաղաղ հայր, իր նկարագիրը շաղախած են երկու ազգակիներով. արուեստի ու գրականութեան արժէքներու նկատմամբ սէր եւ հանրային կեանքի նուիրում:

Այս պայմաններուն մէջ աւարտել է ետք նախակրթական ուսումը, ան կը յաճախէ Համազգայինի «Նշան Փալանճեան» ձեռնարանի երկրորդական բաժինը, ուրկէ կը ստանայ ֆրանսական Ա. եւ Բ. պաշարորդի վկայական: Ապա բարձրագոյն ուսումը կը շարունակէ Lycée Francaise-ին մէջ, ուր կ'ուսանի գրականութիւն եւ մանկավարժութիւն, եւ կը վկայուի Bachelor of Arts վկայականով:

Որոշ ժամանակ «Սուրբ Նշան» եւ Համազգայինի «Նշան Փալանճեան»

ձեռնարան կրթական հաստատութիւններուն մէջ կը ստանձնէ ուսուցչական պաշտօն: Ապա կը մեկնի Փարիզ, այնտեղ շարունակելու համար իր համալսարանական ուսումը: Կը յաճախէ Sorbonne համալսարանը, ուրկէ կը վկայուի Գրականութեան Դոկտորայի աստիճանով:

Ֆրանսա ապրած օրերէն իսկ, Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեան գերակատարութիւն կը ստանձնէ ազգային-հասարակական կեանքին մէջ: Ուսանողական օրերէն սկսեալ, ան մաս կը կազմէ հետեւեալ պարբերականներու խմբագրական կազմերուն. «Արաքս» մանկապատանեկան պարբերաթերթին, Նոր Սերունդ Միութեան «Հայաստան» ամսագրին, եւ «Յառաջ» օրաթերթին: Միաժամանակ կը վարէ Cité universitaire de Paris-ի Maison des étudiants arméniens հայ ուսանողական տան տնօրէնի պաշտօնը:

1963-ին, իր գաւկիւն Ալեքս Սաքրգի հետ կը հաստատուի Մոնթրէլ, ուր կ'ամուսնանայ Վարուժան Մինասեանի հետ: Մոնթրէլի մէջ եւս կը մտնէ ուսուցչական ասպարէզ, նախ՝ École normale Jacques Cartier ապա՝ Université du Québec à Montréal համալսարանը, ուր կը հանդիսանայ համալսարանի գրականութեան բաժանմունքի հիմնադիրներէն մին, եւ ուր 24 տարիներ կը դասաւանդէ անընդմէջ իբր մնայուն փրոֆեսոր:

Բացի իր ակադեմիական աշխատանքէն, ընկերուհի Շաքէն կը շարունակէ մաս կազմել մեծաթիւ հայկական թերթերու եւ պարբերականներու խմբագրական կազմերուն, ինչպէս «Ակոս», The Armenian Review, The Canadian Slavonic Papers, La Cause Arménienne, եւ Հորիզոն Շաբաթաթերթի

Գրական Յանգրուածք: Միաժամանակ, ան իր յօդուածներով կ'երեւի «Ազգակ»-ի, «Այգ»-ի, «Յառաջ»-ի, «Ազգարար»-ի եւ «Հորիզոն»-ի էջերուն մէջ:

Ընկերուհի Շաքէի բեղուն գործունէութիւնը չի սահմանափակուի դասաւանդութեամբ եւ գրականութեամբ: Ան նաեւ գործօն գերակատարութեամբ կը մասնակցի այլեւայլ յանձնախումբերու, միութիւններու եւ կազմակերպութիւններու վարչական կազմերուն: 1970-ին կ'ընտրուի Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ, եւ այդ պաշտօնը կը վարէ մինչեւ 1986: 1972-1978 փոխ-նախագահն է Conseil des écoles ethniques de Montréal մարմնին, 1974-1986՝ անդամ Comité consultatif de ministère de l'immigration du Québec-ին, 1976-1978՝ անդամ Communication jeunesse-ի վարչութեան, 1981-1984՝ իր բաժանմունքի ներկայացուցիչը Conseil des études de the Université du Québec-ին, եւ 1990-1994՝ անդամ Ville St. Laurent-ի Liberal կուսակցութեան տեղական վարչութեան:

Այս բոլորին կողքին, Դոկտոր Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեանի հարուստ վաստակին մաս կը կազմեն իր աշխատասիրութիւնները, թարգմանութիւններն ու հատորով լրջ տեսած գործերը: Անոնց արագ թուում մը գաղափար մը կու տայ հանգուցեալին մտաւորական արգասիքին մասին.

Contes et légendes arméniens, Beyrouth, 1964.

L'épopée populaire arménienne, David de Sassoun Montreal 1972.

Politiques littéraires en union soviétique, Montréal, 1978.

Contes arméniens. Editions Kirk. 1987.

Le dossier arménien, Montreal,

1988.

Renyi Picture Dictionary - English-Armenian. Toronto, 1990.

Հայերէնի գիրքս դասագրքերու շարքը 1978-1994

Թարգմանութիւն Lawrence Durrellի Prospero's Cell գործին, «Յառաջ»-ի մէջ

Օղակներէն մէկը կամ Վաղարշ Ա. Թագաւոր Հայոց, 2000.

Ընկերուհի Շաքէի ստեղծագործական եւ կրթական գործունէութիւնը բարձր գնահատուած է ամենուր: 1996-ին ան ստացած է Montreal Citizenship Council-ի Outstanding Citizen մրցանակը, 1997-ին Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի Կրթական Թեմի Առաջնորդարանը զինք հռչակած է «Տարուան կինը», նոյն տարին, Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսը իրեն պարգեւած է «Մեարոյ Մաշտոց» շքանշանը, իսկ 2004-ին, ան պատուընուած է ստացած է Համազգայինի Կեդրոնական Վարչութեան շքանշանով:

Համազգայինի մէջ, ընկերուհի Շաքէն եղաւ հաւատաւոր անդամ, խթանելով մեր վարչութիւններու գործունէութիւնը, իր մասնակցութիւնը բերելով անոնց կազմութեան, եւ սատար կանգնելով որ ի գործ դնենք մեր առաքելութիւնը:

Իր մահուան տխուր առթիւ, Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը հետեւեալ ցաւակցագիրը ուղարկած է ողբացեալին ընտանիքին ու հարազատներուն.

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը սգայ Փրոֆ. Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեանի մահը, եւ իր խորագգաց ցաւակցութիւնները կը փոխանցէ ձեզի եւ ձեր ընտանեկան պարագաներուն:

Հորիզոն | www.horizonweekly.ca

HAIG AFARIAN

Cell : 514.862-6779
Bur : 514.360.3000 ext 1234
haig.afarian@gmail.com

Effectuée par
MELS ARCHITECTES/PROFESSEURS

Charisma FINANCE

3310 100e Avenue, bureau 350, Laval
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7

ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilanian@sutton.com

Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

VÉHICULES D'OCCASION
CERTIFIÉS

NISSAN | **HONDA**

GABRIEL | **GABRIEL**

Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite

AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available
in Armenian, Arabic,
English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX

ՀԱՅԿ ԿԱՐՊՈՒՆԵԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE

**CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)**

2535 de Salaberry, Montréal | Tél: 514.334.7830

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹՊԻՆՎԱԿԱՆՆԵՐ

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ

Մարզական եւ Սկաուտական արձանագրութիւններ ամեն երեկոյեան ժամը 7-8 հեռաձայնել 514 979 6272 եւ 514 295 3245 Homenetmen Laval Դիմատետրի (Facebook) էջով

Հաւաքոյթ Լաւալի Պարոնեան սրահէն ներս ՀՄԸՄ Լաւալի գործունէութեան եւ 100 ամեակի առթիւ երկուշաբթի 10 Յուլիս 2017

Դաշտահանդէս Լաւալի հայ կեդրոնի շրջափակ Օգոստոս 26-27 2017

ԹՈՐՈՆՏՕ

Մարտի 28 Հոկտեմբեր 2017 Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան «Ռուրիկ» մասնաճիւղ ՏՈՂՄԻԿ ՕՐ - 24-րդ - Զօնուած՝ Նախիջեան նահանգին եւ 5 գաւառներուն՝ Գողթան, Երնջակ, Հահուկ, Նախիջեան եւ Շարուր

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ողբ. ՄԱՐԻ ՔԵՍԵՅԵԱՆԻ (ծնեալ Պերպերեան) մահուան Ա. տարելիցին առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 16 Յուլիս 2017-ին, Ա.Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. Պատարագի: Սգակիրներ՝ գաւակները եւ թոռները, Գեորգ եւ Մարալ Քեօսէյեան եւ դուստրը Անի, Մոսթէս եւ Վանտա Քեօսէյեան եւ գաւակը Ռաֆֆի, Լենա Քեօսէյեան եւ գաւակները Լոռի եւ Արի, Մանուէլ եւ Բիշիկ Թալին Քեօսէյեան եւ գաւակունք, Սեւակ եւ Լենա Չոբանեան եւ գաւակունք, Արի եւ Մարիա Գոլոմբեան եւ գաւակը, Վիգէն եւ Թանիա Քեօսէյեան եւ համայն Պերպերեան, Գանանեան, Ոսկերիչեան, Գազանեան, Հաբիմեան, Մարտիրոսեան, Փանոսեան եւ Քիրթիւեան ընտանիքներ:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

«ՀՄԸՄ Լաւալ» Վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ եղբ. Բիչըրտ Մելոնեանի, իր հօր՝ ողբ. ՏԻԳՐԱՆ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ-ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Այսու մեր խորին շնորհակալութիւնները կը յատնենք Տէր Գառնիկ Բեյ. Գոյունեանի Ա. Յակոբ առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան, Դրօ եւ Աննա Փիլիկեան Շարաքօրեայ վարժարանի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, Կիրակնօրեայ դպրոցի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, Թէթեան Մշակութային Միութեան եւ բոլոր անոնց որոնք անձամբ, հեռաձայնով, Ե-նամակով, աղօթքով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան մեր սուգին, մեր սիրելի մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ, հարազատին՝ ողբ. ԱՆԱՀԻՏ ՆԱԶՕՅԵԱՆ-ՆԱՀԱՐԵԱՆ-ին մահուան տխուր առթիւ:



Հանգուցեալին մահուան քառասունփի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի, Կիրակի, 16 Յուլիս 2017, Մոնթրէալի Ա. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. Պատարագի: Սգակիրներ՝ Նանարեան, Նազօյեան, Էտուարտ, Պերպերեան, Պէզնեան եւ Ալեքսանեան ընտանիքներ:



ՀՕՄ-ի Մոնթրէալի Սօսէ մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն հինգշաբթի ժամը 12:00-էն 4:00:

Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:



Այցելեցէք Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կայքէջը՝ www.canada.mfa.am



ՀՕՄ-ի Մոնթրէալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն

ՀՕՄ-ի Մոնթրէալի ընկերային ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Մոնթրէալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունէութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն. - Կ'օգնէր դիրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը: - Կ'ամբողջացնէր կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants: - Նորեկները կ'արձանագրենք ֆրանսերէնի դասընթացներու: - Կ'ընկերակցինք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ: - Նոր ժամանած եւ տակալին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր: - La Corbeille գանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ գեղջուած գիներով ուտեստեղէն կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն:

Հինգշաբթի օրերը ժամը 12:00էն - 4:00 Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5 Հեռաձայն՝ 514 514-335-2222

Հ Ե Ր Ն Ա Ր Կ Ն Ե Ր Ե Ի Ա Ջ Դ Ե Ր

Ունկնորեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիօժամերը՝

- ՎԱՆԳՈՒՎԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00
- ԹՈՐՈՆՏՕ- «Կիլիկիոյ Չայն» CHTO AM 1690 Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00
- ՄՈՆՏՐԵԱԼ- «Հայ Կեդրոնի Չայն» 105.1 FM Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00 Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30 Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00 «Վանայ Չայն» 1450 AM Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00
- ՀԱՄԻԼԹՆ- «Հայ Կեդրոնի» ռատիօժամ CFMU 93.3 FM Կիրակի առաւօտեան 10:00-11:00 cfmu.mcmaster.ca



horizon

HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly Publié par / Published by Les Publications Arméniennes (1991) 3401, Olivar-Asselin Montréal, Québec Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada 2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes 1^{re} classe - 1st class: \$95 États-Unis / USA 1^{re} classe - 1st class: \$95 US Ailleurs / Elsewhere 1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité Sylva Eshradjian-Bachekjian (General Manager) Tél.: (514) 332-3757 Télécopieur/Fax (514) 332-4870 E-Mail: sylva@horizonweekly.ca Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ Խմբագիր՝ Վահագն Գարագաշեան Վարչական պատասխանատու՝ Սիլվա Պաշոգճեան Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան Աագ խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արքիմեան Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքահամեան, Թինա Սիլահեան Չեւատրում՝ Նէնսի Կիրակոսեան Սրբազրիչ՝ Սոնիա Աճէմեան Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝

Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921 Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գարուստ Պապեան, Վազգէն Տէկիմէնթաշ,

Financé par le gouvernement du Canada Funded by the Government of Canada





CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
 ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048





ANI BAKERY

ԱՆԻ ՓՈՒԳՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատեր՝ Արսեն Տապալաղեան

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցէք եւ
գոհ պիտի մնաք**



NEW ADDRESS FROM JANUARY 2016

Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)



Innové
pour exalter

GROUPE NISSAN
GABRIEL

LE TOUT NOUVEAU

NISSAN QASHQAI 2017

EN SALLE DE MONTRE. VENEZ L'ESSAYER.

POUR AUSSI PEU QUE

19 998\$*

Frais de transport et de
préparation (1 750\$) ne sont pas inclus.



Modèle européen illustré. Le modèle canadien peut varier.

INGÉNIEUX. BRANCHÉ. PRÊT À TOUT.

VÉHICULE UTILITAIRE SPORT COMPACT

Découvrez un tout nouveau type de véhicule utilitaire compact. Sportif et polyvalent, il a un nom que l'on aime prononcer. Le Nissan Qashqai^{MD} 2017 est un multisegment habile qui vous permet de vous frayer un chemin dans l'agitation du quotidien ou de briser à tout moment la routine pour le faire une escapade.

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantalon.com

◀ **OUVERT LES SAMEDIS** ▶

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabrielanjou.com

◀ **OUVERT LES SAMEDIS** ▶


*Livraison du Nissan Qashqai 2017 à partir du 5 juin 2017. Quantité limitée. Frais de transport et de préparation (1 750\$) ne sont pas inclus. Les frais de 100\$ pour le climatiseur (le cas échéant), les rabais du manufacturier et les contributions des concessionnaires sont compris. Cette offre ne peut pas être combinée à aucune autre promotion. Taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15\$) et assurances en sus, et exigés à la signature du contrat. Certaines conditions s'appliquent. Visitez Nissan Gabriel Jean Talon ou Nissan Gabriel Anjou pour tous les détails.



BARRY KAREN GARO
KAZANDJIAN



514
333-3000
 DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN.com

CLASSÉS PARI MI LES MEILLEURS COURTIER S RE/MAX AU MONDE
 RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5